INGO

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ խորհրդի կողմից
Արձանագրություն №250 առ 03/05/2024

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է
14 մայիսի 2024 թվականից

Կոդ՝ 04.22.10
Խմբագրություն՝ 3.0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ 3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 4
4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ 4
5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ 9
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ 13
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ 14
8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ 15
9. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ 17
10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 20
11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ 21
12. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 23
13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ 25
14. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ / ՓԱԹԵԹՆԵՐ 25

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն՝ Աջակցության ապահովագրության կանոնները (այսուհետ՝ Կանոններ և/կամ Պայմաններ) մշակված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և գործող իրավական ակտերի հիման վրա, և սահմանում են ՀՀ տարածքից դուրս ճամփորդող ֆիզիկական անձանց բժշկական և այլ ծախսերի ապահովագրության իրականացման ընդհանուր կարգը, և համարվում են Աջակցության ապահովագրության պայմանագրերի (այսուհետ՝ Պայմանագիր և/կամ Վկայագիր) անբաժանելի մասը:

1.2. Սույն Կանոնների համաձայն «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն իրականացնում է ապահովագրություն ոչ կյանքի ապահովագրության հետևյալ դասերով՝
Ա) Աջակցության ապահովագրություն,
Բ) Ֆինանսական ռիսկերի ապահովագրություն:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ

2.1. Սույն Կանոններին համապատասխան կնքված ապահովագրության պայմանագրերով Ապահովագրող է հանդիսանում «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն՝ գրանցված ՀՀ, ք.Երևան, Հանրապետության 51, 53, տարածք 47, 48, 50-ում, ՀՀ ԿԲ գրանցման համար՝ 7, տրված 28.03.2008թ.:
Ապահովագրողի պաշտոնական կայք – www.ingoarmenia.am:

2.2. Սույն Կանոնների համաձայն՝ Ապահովադիր կարող են հանդիսանալ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները (գործունակ ֆիզիկական և իրավաբանական անձինք, պետական մարմիններ, օտարերկրյա պետություններ, և այլն):

2.3. Ապահովադիրը իրավունք ունի պայմանագիրը կնքել երրորդ անձանց համար (ապահովագրված անձինք): Եթե Ապահովադիրը հանդիսանում է Ապահովագրված անձ, ապա վերջինիս բոլոր իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև Ապահովադրի վրա:

2.4. Պայմանագրով Ապահովագրված անձինք ֆիզիկական անձինք են:

2.5. Պայմանագիրը համարվում է կնքված հօգուտ Ապահովագրված անձի, եթե Պայմանագրում այլ Շահառու նշված չէ: Ապահովագրված անձից տարբերվող այլ անձի Շահառու նշելու պարագայում, ներառյալ, եթե Շահառու է ապահովագրված անձ չհանդիսացող Ապահովադիրը, անհրաժեշտ է Ապահովագրված անձի գրավոր համաձայնությունը: Ապահովագրված անձի մահվան դեպքում, եթե Պայմանագրում այլ Շահառու նշված չէ, Շահառու են հանդիսանում Ապահովագրված անձի օրինական ժառանգները:
Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մոտ առաջացած ծախսերի հատուցումը կարող է իրականացվել անմիջապես Ապահովագրված անձին՝ վերջինիս մշտական բնակության վայր վերադառնալուց հետո, կամ այլ կազմակերպության (այսուհետ՝ Աջակցման Կենտրոն), որը կազմակերպել և մատուցել է սույն Կանոններով նախատեսված ծառայությունները և տեղում վճարել ծախսերը:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Սույն Կանոններով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում գույքային շահերը, կապված.

3.1.1. Բժշկական և դեղորայքային օգնության կազմակերպման և մատուցման (բժշկական ծառայություններ), այդ թվում՝ խորհրդատվությունների Պայմանագրով սահմանված այլ ծառայությունների վճարման հետ, ներառյալ ֆիզիկական անձի առողջության վատթարացման հետևանքով տեղի ունեցած բուժա-տրանսպորտային ծախսերի հետ:
3.1.2. Ֆիզիկական անձանց՝ Պայմանագրով նախատեսված անկանխատեսելի ծախսերի հետ, այդ թվում ետմահու ռեպատրիացիայի կազմակերպման ծախսերի վճարման, Ապահովագրված անձի ճանապարհին տեխնիկական աջակցության կազմակերպման, իրավաբանական խորհրդատվության ծառայության վճարման հետ:

4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ

4.1. Սույն Կանոնների շրջանակում օգտագործվում են հետևյալ սահմանումները.
4.1.1. Աջակցման կենտրոն – մասնագիտացված կազմակերպություն (ընկերություն), որի վավերապայմանները ներկայացված են ապահովագրության Պայմանագրում կամ Վկայագրում և/կամ Ապահովագրողի պաշտոնական կայքում, որը Ապահովագրողի պատվերով իրականացնում է սույն Կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումը:

4.1.2. Թեթև մարդատար ավտոմեքենա – մինչև 3,5 տոննա քաշը և վարորդը ներառյալ մինչև 8 նստատեղ ունեցող ավտոմեքենա, որը ունի համապատասխան փաստաթղթավորված գրանցում, և Ապահովագրողի Աջակցման Կենտրոն դիմելու պահի դրությամբ գտնվում է իրավական շահագործման մեջ:
4.1.3. Հիվանդության հանկարծակի սրացում, այդ թվում թունավորում – հիվանդություն, որն ի հայտ է եկել հանկարծակիորեն Ապահովագրության Վկայագրի գործողության ընթացքում և պահանջում է անհապաղ և/կամ արտակարգ բժշկական միջամտություն, այդ թվում Ապահովագրված անձի մահվան հանգեցնող՝ պայմանով, որ նշված իրադարձությունը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից Պայմանագրով սահմանված ապահովագրության տարածքում գտնվելու ժամանակ, Պայմանագրի գործողության ընթացքում:

4.1.4. Դժբախտ պատահար - արտաքին, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ), չմտադրված, անկանխատեսելի պայմանների և հանգամանքների զուգադիպումը, այդ թվում՝ սխալ բժշկական մանիպուլյացիաները, անաֆիլակտիկ շոկը, սուր թունավորումը, շնչահեղձումը, ջրահեղձումը, մարմնի գերսառեցումը կամ տաքացումը, այրվածքները, և այլն, որոնց դեպքում Ապահովագրված անձի կամքից անկախ մարմնական վնասվածքների կամ տոքսիկ ազդեցության հետևանքով վնաս է հասցվում նրա առողջությանը, կամ ստանում է հաշմանդամության կարգ, կամ վրա է հասնում նրա մահը, պայմանով, որ նշված իրադարձությունը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից Պայմանագրով սահմանված ապահովագրության տարածքում գտնվելու ժամանակ, Պայմանագրի գործողության ընթացքում:
Սխալ բժշկական մանիպուլյացիաները համարվում են դժբախտ պատահար, միայն եթե առկա է Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասի կամ մահվան և դրանց միջև դատա-բժշկական փորձաքննության և դատական որոշման հիման վրա հաստատված պատճառահետևանքային կապ:
Դժբախտ պատահար չեն համարվում հիվանդությունները կամ դրանց բարդացումները (ինչպես նախկինում ախտորոշված, այնպես էլ առաջին անգամ հայտնաբերված), ինչպես նաև այն հիվանդությունները կամ դրանց բարդացումները, որոնք առաջացել (զարգացել) են արտաքին գործոնների ազդեցության հետևանքով, այդ թվում նաև՝ սրտամկանի ինֆարկտը, գլխուղեղի կաթվածը, անևրիզմները, օրգանների ֆունկցիոնալ անբավարարությունը, օրգանների բնածին արատները:

4.1.5. Քրոնիկ հիվանդության սրացում – Ապահովագրության ժամկետի ընթացքում Պայմանագրով նշված Ապահովագրության տարածքում առողջության հանկարծակի սուր վատթարացում՝ կապված նախկինում ունեցած քրոնիկ հիվանդությունների և/կամ պաթոլոգիաների հետ, այդ թվում՝ կիստաների, խոցերի և քարերի գոյացությունների հետ, և որը պահանջում է անհապաղ և անհետաձգելի բժշկական օգնություն, այդ թվում՝ հանգեցրել է Ապահովագրված անձի մահվան, պայմանով, որ նշված իրադարձությունը տեղի է ունեցել Ապահովագրված անձի՝ Պայմանագրով սահմանված ապահովագրության ժամկետում և ապահովագրական տարածքում:

4.2. Ապահովագրական ռիսկ է համարվում ենթադրելի իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է սույն Պայմանագիրը:

4.3. Ապահովագրական պատահար է համարվում սույն Կանոնների 4.4. կետով սահմանված իրադարձությունները, որոնք հանգեցնում են Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցման տրամադրման պարտավորությանը:
Ապահովագրության Պայմանագիրը կարող է կնքվել 4.4 կետում նշված իրադարձություններից ինչպես մեկի համար, այնպես դրանց տարբեր համակցություններով:

4.4. Սույն Կանոններով Ապահովագրողը ապահովագրության Պայմանագրով տրամադրում է ապահովագրական ծածկույթ՝ հետևյալ ռիսկերի համար.
4.4.1. «Բուժօգնություն» - Ապահովագրված անձի հանկածակի սուր հիվանդության, այդ թվում՝ թունավորման, քրոնիկ հիվանդության սրացման, դժբախտ պատահարի, Ապահովագրված անձի մահվան հետևանքով բժշկական կամ այլ ծառայություն ստանալու համար բժշկական կենտրոն կամ այլ հաստատություն դիմելու հետևանքով առաջացած անկանխատեսելի ծախսերի առաջացում, ինչպես նաև կապված ապահովագրության Պայմանագրով նախատեսված Ապահովագրված անձի կողմից արտասահմանում գտնվելու ընթացքում այլ հանգամանքների հետ:

4.4.2. «Իրավաբանական խորհրդատվության կազմակերպման աջակցություն» - իրավաբանի խորհրդատվության ստացման հետ կապված անկանխատեսելի ծախսեր, ինչպես նաև Ապահովագրված անձի՝ օտարերկրյա պետության տարածքում գտնվելու ընթացքում իրավաբանի կողմից քրեական և քաղաքացիական հայցերի իրավական օգնության ծախսեր:
4.4.3. «Ճանապարհին տեխնիկական աջակցության կազմակերպում» - Թեթև մարդատար ավտոմեքենայի էվակուացիայի և/կամ վարորդի և ուղևորների տեղափոխման անկանխատեսելի ծախսերը՝ կապված ավտոմեքենայի շահագործման կամ ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում դրա առանձին ագրեգատների, համակարգերի կամ մասերի խափանման հետ, որոնք թույլ չեն տալիս տվյալ մեքենային ինքնուրույն տեղաշարժվել:

4.5. Բուժօգնություն ռիսկով ապահովագրական պատահար չեն հանդիսանում և ենթակա չեն ծախսերը.

4.5.1. Կապված քրոնիկ հիվանդությունների բուժման հետ (բացառությամբ սրացումների դեպքում անհետաձգելի բուժօգնության ծախսերից), ինչպես նաև հիվանդությունները, որոնք հայտնի են եղել Ապահովագրության Վկայագիրը կնքելու պահին, ինչպես նաև նախքան Ապահովագրության Վկայագիրը կնքելը առկա եղած հիվանդությունների հետ, անկախ նրանից իրականացվել է բուժում, թե ոչ (այդ թվում կապված քարերի, խոցերի, և այլ գոյացությունների առաջացման հետ),
4.5.2. Կապված մինչև ապահովագրության ժամկետի սկիզբը առկա հիվանդությունների, վնասվածքների, վիճակների հետ, կամ կապված մինչև ապահովագրության սկիզբ կատարված բուժման հետ,
4.5.3. Կապված ապահովագրված անձի առողջության վատթարացման կամ մահվան հետ՝ դեղամիջոցների ընդունման հետևանքով, այդ թվում՝ Աջակցման Կենտրոնի կողմից ուղղորդված բժշկի կողմից չցուցված դեղամիջոցներ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով,
4.5.4. Կապված ապահովագրված անձի առողջության վատթարացման կամ մահվան հետ այն դեպքում, եթե ճանապարհորդությունը Ապահովագրված անձի առողջության վիճակից ելնելով եղել է հակացուցված,

4.5.5.Ախտորոշիչ (դիագնոստիկ) մանիպուլյացիաների (այդ թվում խորհրդատվությունների և լաբորատոր հետազոտությունների) և վերահսկիչ զննումների՝ առանց հաջորդող բուժման:

4.5.6.Անգիոգրաֆիային, ինչպես նաև սրտի և անոթների վիրահատության հետ կապված ծախսերը, այդ թվում անգիոպլաստիկան, ստենտավորումը, շունտավորումը, և այլն, նույնիսկ եթե դրանց անցկացման համար առկա են բժշկական ցուցումներ: Այն դեպքում, երբ ընդհանուր հաշվից հնարավոր չէ առանձնացնել վերոնշյալ մանիպուլյացիաների ծախսերը, դրանց ծախսերը հաշվարկվում են հիվանդանոցում գտնվելու առաջին երկու օրվա չափով (վիրահատության օր և դրան հաջորդող օր) և հանվում են ընդհանուր հաշվի թվից:

4.5.7.Օնկոլոգիական հիվանդությունների և/կամ դրանց հետևանքների բուժման հետ կապված ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով,

4.5.8.Բարորակ նորագոյացությունների բուժման ծախսերը՝ անկախ նրանից Ապահովագրված անձը նախքան ճամփորդությունը տեղյակ էր տվյալ հիվանդությունից, թե ոչ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.5.9.Արևային այրվածքների և ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությամբ մաշկի կտրուկ փոփոխությունների բուժման հետ կապված ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով

4.5.10. Ապահովագրված անձի կողմից այնպիսի բժշկական ծառայություններից օգտվելու հետ կապված ծախսերը, որոնք կապված չեն հանկարծակի հիվանդության կամ դժբախտ պատահարի ի հայտ գալու հետ՝ պրոֆիլակտիկ միջոցառումներ և ընդհանուր բժշկական հետազոտություններ

4.5.11. Կապված հղիության վարման և դրա ընդհատման հետ՝ անկախ դրա տևողությունից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.5.12. Կապված ծննդօգնության և երեխայի հետծննդական խնամքի հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.5.13. Կապված հղիության պաթոլոգիական ընթացքի, հղիության ընթացքում առաջացած բարդությունների հետ՝ անկախ դրա տևողությունից, բացառությամբ արտարգանդային հղիության դեպքում շտապ բուժօգնության ծախսերից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.5.14. Վեներական հիվանդությունների, առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, ինչպես նաև ՄԻԱՎ, ՁԻԱՀ և հեպատիտի ցանկացած տեսակի հետևանքով առաջացած հիվանդությունների և դրանց հետևանքների (ներառյալ՝ բարդությունների) բուժման ծախսերը,

4.5.15. Պլաստիկ և վերականգնողական վիրաբուժության, տրանսպլանտոլոգիական (օրգանների փոխարինում), ցանկացած տեսակի պրոթեզավորման, ներառյալ ստոմոտոլոգիական, օրթոպեդիական, և ակնաբուժական պրոթեզավորման հետ կապված ծախսերը, ներառյալ պրոթեզների, էնդոպրոթեզների, իմպլանտների ծախսերը (այդ թվուն անգիոգրաֆիա, անգիոպլաստիկա, ստենտավորում, էլեկտրոկարդիոստիմուլյատոր, և այլն),

4.5.16. Հետևյալ ստոմոտոլոգիական բուժօգնության տրամադրման. օրթոդոնտիկ բուժում, իմպլանտների տեղադրում, կոսմետիկ և պրոֆիլակտիկ գործողություններ, ատամնաքարի հեռացում, ընդհանուր բժշկական զննություն և խորհրդատվություն, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

4.5.17. Այնպիսի ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերը, որոնք բժշկական տեսակյունից անհրաժեշտություն չեն ներկայացնում կամ այնպիսի բուժման հետ կապված ծախսերը, որոնք բժշկի կողմից չեն նշանակվել,

4.5.18. Այն ծախսերը, որոնք առաջացել են ապահովագրական պատահարի հետևանքով բժշկին դիմելու և նրա կողմից կատարված նշանակումից Ապահովագրված անձի ինքնակամ հրաժարվելու հետևանքով,

4.5.19. Մանուալ թերապիայի, ռեֆլեքսոթերապիայի (ակուպունկտուրայի), խիրոպրակտիկայի, մերսման, հոմեոպատիայի, ֆիտո և նատուրոտերապիայի և այլ նմանատիպ մեթոդներով բուժման հետ կապված ծախսերը,

4.5.20. Ապահովագրված անձի բարեկամների կողմից վերջինիս բուժման կամ խնամքի ծախսերը, ներառյալ Ապահովագրված անձի բարեկամների ապրուստի հետ կապված ծախսերը, որոնք պայմանավորված են նրա բուժմամբ և մշտական բնակության երկիր հետագա վերադարձի հետ,

4.5.21. Համապատասխան լիցենզավորում չունեցող բժշկական ծառայություններ մատուցող հաստատության կամ բժշկական գործունեություն իրականացնելու իրավունք չունեցող անձի ծառայություններից օգտվելու հետևանքով առաջացած ծախսերը,

4.5.22. Համապատասխան փաստաթղթավորված (հաշիվ, չէկ, անդորրագիր, և այլն) հաստատում չունեցող տրանսպորտային և այլ ծառայությունների հետ կապված ծախսերը,

4.5.23. Ապաքինման, վերականգնողական բուժման և ֆիզիոթերապիայի հետ կապված ծախսերը,

4.5.24. Հանգստավայրերում, առողջարանային համալիրներում, հանգստյան տներում, պանսիոնատներում և այլ նմանատիպ վայրերում իրականացված բուժումների արդյունքում առաջացած ծախսերը, ներառյալ դրանց հետևանքով առաջացած հիվանդությունների, և/կամ ռեպատրիացիայի (ներառյալ՝ ետմահու) ծախսերը,

4.5.25. Վակցինացիայի իրականացման հետ կապված, այդ թվում ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած կատաղության, էնցեֆալիտի և այլնի համար կատարվող վակցինացիայի, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.5.26. Պլանային վիրահատությունների և հոսպիտալացման ծախսերը, նույնիսկ եթե տվյալ գործողությունները կապված են Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած ապահովագրական պատահարի հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.5.27. Դժբախտ պատահարի կամ անհետաձգելի հիվանդության հետ չկապված բժշկական փորձաքննությունների, լաբորատոր և դիագնոստիկ հետազոտությունների իրականացման հետ,

4.5.28. Այն ծախսերը, որոնք կապված են հավելյալ հարմարությունների տրամադրման հետ, այդ թվում “Լյուքս” պալատի, հեռուստացույցի, օդափոխիչ սարքի, վարսավիրի, մերսողի, թարգմանչի և այլ նմանատիպ ծառայությունների հետ,

4.5.29. Ապահովագրական պատահարի հետևանքների կարգավորման հետ կապված շտապ և անհետաձգելի կապի միջոցների (հաղորդագրություններ, բանակցություններ) փաստաթղթավորված ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: Ապահովագրված անձի կողմից Աջակցման Կենտրոն կատարված առաջնային զանգի ծախսերը հատուցվում են՝ զանգը և ծախսը հավաստող բնօրինակ փաստաթղթերի առկայության դեպքում: Ընդ որում, տվյալ հաշիվը պետք է առնվազն պարունակի. զանգի ամսաթիվը, հեռախոսի համարը, խոսակցության տևողությունը, վճարված ծախսը:

4.5.30. Ապահովագրված անձի հիմնական բնակության երկիր վերադառնալուց հետո, ինչպես նաև Ապահովագրության Վկայագրի գործողության ավարտից հետո ի հայտ եկած ծախսերը,

4.5.31. Ստացիոնար բուժման, բժշկա-տրանսպորտային, տրանսպորտային, հետմահու ռեպատրիացիայի հետ կապված այն ծախսերը, որոնք արտոնված չեն Աջակցության Կենտրոնի կողմից: Ապահովագրողը իրավունք ունի հատուցել նման ծախսերը մասնակի կամ ամբողջությամբ, եթե Աջակցման Կենտրոն չդիմելու պատճառները համարի օբյեկտիվ,

4.5.32. Կապված ծծմբային խցանների ախտորոշման և բուժման հետ,

4.5.33. Բարոկամերայում իրականացված բուժման հետ կապված ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.5.34. Ծախսերը, որոնք առաջացել են Ապահովագրված անձի կողմից մշտական բնակության երկիր էվակուացվելուց ինքնակամ հրաժարվելուց, երբ էվակուացիան բժշկական ցուցմամբ թույլատրվում է (5.4.2 կետ), եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6. 4.4.1 կետում նշված իրադարձությունները չեն համարվում ապահովագրական պատահարներ, եթե դրանք կապված են.

4.6.1. Կոնվուլսիվ վիճակի հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.2.Նյարդային և հոգեկան հիվանդությունների, նեվրոզի (պանիկական նոպաների, դեպրեսիայի, հիստերիկ սինդրոմների և այլն), հոգնածության, գերծանրաբեռնվածության,

4.6.3.Դեղամիջոցների գերօգտագործման և/կամ սխալ օգտագործման հետ, ինչպես նաև ընդունված դեղերի և (կամ) դրանց առանձին բաղադրիչների նկատմամբ անհատական անընդունելիության, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.4.Ալկոհոլ պարունակող միջոցների ընդունման (ալկոհոլի օգտագործման առկայությունը կարող է փաստվել բժշկական եզրակացություններում/ հաշվետվություններում, արձանագրվեն վկաների ցուցմունքներով և պատահարի վերաբերյալ այլ փաստաթղթերով), և/կամ ապահովագրված անձի կողմից ալկոհոլի ազդեցության տակ գտնվելու հետ, որը կարող է փաստվել բժշկական եզրակացություններում/ հաշվետվություններում, արձանագրվեն վկաների ցուցմունքներով և պատահարի վերաբերյալ այլ փաստաթղթերով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.5.Թմրանյութեր, տոկսիկ նյութեր և այլ հոգեմետ միջոցների օգտագործման (թմրանյութերի, տոկսիկ նյութերի և այլ հոգեմետ միջոցների օգտագործման առկայությունը կարող է փաստվել բժշկական եզրակացություններում/ հաշվետվություններում, արձանագրվեն վկաների ցուցմունքներով և պատահարի վերաբերյալ այլ փաստաթղթերով)

և/կամ ապահովագրված անձի կողմից թմրանյութերի, տոկսիկ նյութերի և այլ հոգեմետ միջոցների ազդեցության տակ գտնվելու հետ, որը կարող է փաստվել բժշկական եզրակացություններում/ հաշվետվություններում, արձանագրվեն վկաների ցուցմունքներով և պատահարի վերաբերյալ այլ փաստաթղթերով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.6. Ապահովագրված անձի ինքնասպանության (ինքնասպանության փորձի) հետ,

4.6.7.Տարերային աղետների և դրանց հետևանքների, համաճարակների, մետեորիտների և այլ տիեզերական մարմինների/առարկաների անկման, կարանտինի հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.8. Ապահովագրված անձի և/կամ Շահառուի՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալուն միտված կանխամտածված գործողությունների հետ,

4.6.9. Ապահովագրված անձի կողմից կատարված հակաօրինական գործունեության հետևանքով, որն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետ ունի ուղիղ պատճառահետևանքային կապ,բայց ամեն դեպքում բացառելով անօրինական շահերի ապահովագրությունը;

4.6.10. Ապահովագրված անձի թռիչքային սարքերով թռնելու, դրանք ղեկավարելու հետևանքով, բացի այն դեպքերի, երբ ինքնաթիռը ղեկավարվում է պրոֆեսիոնալ օդաչուի կողմից և Ապահովագրված անձը հանդիսանում է այդ քաղաքացիական ինքնաթիռի ուղևոր,

4.6.11. Ապահովագրված անձի ոչ շարժիչային թռչող սարքերով, շարժիչային պլաներներով և գերթեթև սարքերով թռչելու հետ, ինչպես նաև պարաշյուտով թռիչքների և օդապարիկով թռիչքի հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.12. Ապահովագրված անձի՝ ցանկացած զինված ուժերում կամ խմբավորումներում ծառայության հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.13. Վտանգավոր սպորտերով և/կամ վտանգավոր հոբբիներով (սնոուբորդով, հատուկ կահավորված երթուղիներով լեռնադահուկային սպորտով, ջրային դահուկով, հեծանվաբորդինգով, սերֆինգով, ռաֆթինգով, առանց ակվալանգի ստորջրյա լողով, մրցավազքային ձիասպորտով, մոտոկրոսսին մասնակցությամբ, տրիալով, սպլեոտուրիզմով, պարկուրով, առանց կանոնների մարտերով, մեծ վայրի կենդանիների որսով, կվադրոցիկլով սիրողական (մեկանգամյա հիմքով, օրինակ՝ արձակուրդի կամ հանգստյան օրերի ժամանակ) կամ պրոֆեսիոնալ զբաղվելու հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.14. Էքստրեմալ սպորտերով և/կամ էքստրեմալ հոբբիներով (սնոուբորդով և լեռնադահուկային սպորտով՝ դրանց համար հատուկ կահավորված երթուղիներից դուրս, ալպինիզմով, ժայռամագլցմամբ, սառցամագլցմամբ, դայվինգով (ակվալանգի կիրառմամբ սուզում ջրի տակ), տրեկինգով (Քայլարշավ առանց մագլցման սարքավորումների օգտագործման), դեպի ստորջրյա քարանձավեր, նավերի կամ շինությունների մասունքներ սուզմամբ՝ անկախ դրանց խորությունից, ինչպես նաև այլ էքստրեմալ հոբբիներ/սպորտերով) սիրողական (մեկանգամյա հիմքով, օրինակ՝ արձակուրդի կամ հանգստյան օրերի ժամանակ) կամ պրոֆեսիոնալ զբաղվելու հետևանքով առաջացած վնասները ենթակա չեն հատուցման:

Էքստրեմալ են համարվում նաև ցանկացած տեսակի և անվանման մարտարվեստները (ներառյալ, բայց չսահմանափակելով՝ բոքս, քիքբոքս, կարատե, ջյուջիցու, տեկվանդո, սամբո և այլն), պրոֆեսիոնալ մարմնամարզությունը, ծանրամարտը, հունահռոմեական և այլ տեսակի ըմբշամարտը, սուսերամարտը, գեղասահքը և ցանկացած տեսակի ավտոմրցաշարերը:

4.6.15. Շարժիչային տրանսպորտային միջոցների (բացառությամբ ավտոմոբիլի և էլեկտրական սկուտերների) կառավարման և/կամ դրանցով որպես ուղևոր ուղևորության հետ, այդ թվում ջրային (շարժիչավոր առագաստանավեր/ զբոսանավեր, ջրային մոտոռոլլերներ, սկուտերներ, մոպեդներ, զբոսանավեր և այլն), եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.16. Աիաբեկչական գործողությունների և դրանց հետևանքների հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.7. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով, Կանոնների 4.4.1 կետով նշված իրադարձությունները չեն համարվում ապահովագրական պատահար, եթե ճանապարհորդությունը նախատեսված է.

4.7.1. Բարձր ռիսկի հետ կապված գործունեության / աշխատանքի համար (այդ թվում որպես որպես հանքափոր, շինարար, էլեկտրամոնտաժող, և այլն)

4.7.2. Եթե Ապահովագրված անձի ուղևորությունը հետապնդում է բուժում ստանալու նպատակ: Ընդ որում, Ապահովագրողը չի հատուցում բուժման հետ կապված ծախսերը, որոնք հանդիսացել են տվյալ պետություն կատարած ուղևորության նպատակ, ինչպես նաև այն ծախսերը, որոնք առաջացել են այդպիսի բուժման հետևանքով Ապահովագրված անձի առողջության վատթարացման կամ մահվան պատճառով: Քրոնիկական հիվանդությունները սրացումները չեն համարվում ապահովագրական պատահար, և Ապահովագրողը ազատվում է անհետաձգելի բուժօգնության ծախսերի հատուցումից, ինչպես նաև սույն Կանոններով և/կամ Պայմանագրով նախատեսված այլ ծառայությունների կազմակերպման ծախսերից, այդ թվում՝ տրանսպորտային և ետմահու ռեպատրիացիայի ծախսերից, եթե ճամփորդությունը ուներ բուժում ստանալու նպատակ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.8. Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ և լրացուցիչ ապահովագրավճարի վճարման դեպքում ապահովագրության Պայմանագրով կարող են նախատեսվել 4.5, 4.6 և 4.7 կետերով թվարկված որոշ իրադարձությունների ներառում որպես ապահովագրական պատահար: Այդ դեպքում Ապահովագրողը իրավունք ունի տվյալ կետերի վրա կիրառել լրացուցիչ հատուցման սահմանաչափեր և չհատուցվող գումարներ:

4.9. Կետը համարվում է ուժը կորցրած

4.10. «Իրավաբանական խորհրդատվության կազմակերպման աջակցություն» ռիսկով չեն համարվում ապահովագրական պատահար և չեն հատուցվում ծախսերը.

4.10.1. Կապված մինչև ապահովագրության ժամկետի սկիզբը տեղի ունեցած քրեական կամ քաղաքացիական հայցերի հետ:

4.11. «Ճանապարհին տեխնիկական աջակցության կազմակերպում» ռիսկով չեն համարվում ապահովագրական պատահար և չեն հատուցվում ծախսերը.

4.11.1.5 տարուց վաղ արտադրված տրանսպորտային միջոցի խափանման կամ կորստի հետ, կամ 10 տարուց վաղ արտադրված տրանսպորտային միջոցի ճանապարհատրանսպորտային պատահարի հետ,

4.11.2. Տրանսպորտային միջոցի վնասի հետ, որի թույլատրելի առավելագույն քաշը գերազանցում է 3,5 տոննան:

4.11.3. Կապված են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությամբ պայմանավորված վնասների հատուցման հետ,

4.11.4. Տրանսպորտային միջոցի վնասի հետ, որը իրականացնում է ուղևորների վճարովի տեղափոխություն, անկախ թույլատրված, թե՝ ոչ:

4.12. Ցանկացած դեպքում Ապահովագրողը չի հատուցում ծախսերը, որոնք.

4.12.1. Գերազանցում են սահմանված ապահովագրական գումարները և ենթասահմանաչափերը

4.12.2. Չեն համաձայնեցվել Աջակցման Կենտրոնի հետ, եթե չհամաձայնեցված գործողությունները հանգեցրել են Ապահովագրողի վնասների ավելացմանը, փոխհատուցման համար ներկայացված հաշիվ-ապրանքագրերի անհիմն ավելացմանը, եթե Ապահովագրության պայմանագրով նախատեսված է Աջակցման Կենտրոն պարտադիր դիմում/ահազանգում: Ապահովագրողը իրավունք ունի հատուցել նման ծախսերը մասնակի կամ ամբողջությամբ, եթե Աջակցման Կենտրոն չդիմելու պատճառները համարի օբյեկտիվ,

4.12.3. Կապված բարոյական վնասի փոխհատուցման հետ:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

5.1. Ապահովագրության Պայմանագրի ժամկետի ընթացքում սույն Կանոնների 4.4.1 կետով թվարկված իրադարձությունների տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը հատուցում է.

5.2. Բժշկական ծախսերը, մասնավորապես.

5.2.1. Անհետաձգելի հոսպիտալացման, այդ թվում արտաարգանդային հղիության բուժման անհրաժեշտության դեպքում բժշկական կենտրոն այցելելու և ստացիոնարում բուժվելու ծախսերը (ստանդարտ պալատային պայմաններում), ներառյալ բժշկական ծառայությունների ծախսերը, վիրահատությունների, ախտորոշիչ հետազոտությունների, բժշկի կողմից նշանակված դեղերի, հետ կապված ծախսերը:

5.2.2. Ամբուլատոր բուժման, ներառյալ բժշկական ծառայութնունների, ախտորոշիչ հետազոտությունների, ինչպես նաև բժշկի կողմից նշանակված դեղերի ծախսերը:

5.2.3. Բժշկի կողմից նշանակված վիրակապային և անշարժացնող միջոցների (գիպս, բանդաժ) ծախսերը՝ ապահովագրության Պայմանագրում նշված սահմանաչափերի շրջանակներում,

5.2.4. Ատամի և ատամը շրջապատող հյուսվածքների սուր բորբոքման, ինչպես նաև դժբախտ պատահարի հետևանքով ատամի վնասվածքի դեպքում բժշկի հետազոտության, անհետաձգելի բուժման, ինչպես նաև դեղամիջոցների և նյութերի ծախսերը,

5.2.5. Բժիշկների խորհրդատվությունների համար, այդ թվում՝ ախտորոշիչ,

5.3. Ապահովագրված անձին անհետաձգելի բժշկական օգնություն (Կանոնների 5.2.1-5.2.5 կետեր) տրամադրում է Ապահովագրողի / Աջակցման Կենտրոնի կողմից ուղղորդված բժշկական կենտրոնը:

5.4. Բուժա-տրանսպորտային ծախսեր, մասնավորապես.

5.4.1. Էվակուացիայի մասով (շտապօգնության մեքենայով կամ այլ տրանսպորտային միջոցով տեղափոխում).

ա) Պատահարի վայրից դեպի ամենամոտ բժշկական հաստատություն կամ անմիջապես մոտակայքում գտնվող բժշկի մոտ էվակուացիայի հետ կապված ծախսերը՝ ապահովագրված անձի կյանքին սպառնացող վտանգի դեպքում և/կամ եթե ապահովագրված անձը ինքնուրույն չի կարող տեղաշարժվել՝ վնասվածքի ծանրության հետևանքով: Հատուցվում են ապահովագրված անձի միայն առաջնային էվակուացիայի/տեղափոխման հետ կապված ծախսերը:

բ) Բուժող բժշկի ցուցմամբ և Ապահովագրողի/Աջակցման կենտրոնի բժշկի հաստատմամբ այլ բժշկական կենտրոն տեղափոխման ծախսերը:

5.4.2. Ճանապարհորդության վայրից մինչև Ապահովագրված անձի մշտական բնակության վայրի տրանսպորտային հանգույց (օդանավակայան, կայարան, կառամատույց), կամ բնակության վայրի մոտակա բժշկական կենտրոն (բժշկի ցուցման դեպքում) խելամիտ տրանսպորտային միջոցով շտապ բժշկական ռեպատրիացիայի իրականացման հետ կապված ծախսերը, ներառյալ ուղեկցող անձի ծախսերը (եթե այդպիսի ուղեկցումը բժշկի ցուցմամբ է): Նշված ծախսերը հատուցվում են, պայմանով.

ա) որ ժամանակավոր կացության երկրում հնարավոր չէ մատուցել անհրաժեշտ բժշկական օգնությունը

բ) Եթե Ապահովագրված անձին անհրաժեշտ է հետաձգված (պլանային) վիրահատություն,

գ) Եթե Ապահովագրված անձին անհրաժեշտ է քրոնիկական հիվանդության սրացման բուժում (Կանոնների 4.1.5 կետ):

Շտապ բժշկական ռեպատրիացիա իրականցում է միայն այն դեպքում, եթե դրա անհրաժեշտությունը տեղական բժշկի տրամադրած փաստաթղթերի և հակացուցումների բացակայության հիման վրա հաստատված է Ապահովագրողի բժշկի կողմից:

Շտապ բժշկական ռեպատրիացիայի հետ կապված ծախսերը հատուցվում են Ապահովագրության Վկայագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Ընդ որում, Ապահովագրողը չի հատուցում Ապահովագրված անձի՝ մշտական բնակության վայր ժամանելուց հետո ստացած բժշկական և այլ ծառայությունների ծախսերը:

5.4.3. Ճանապարհորդության վայրից մինչև Ապահովագրված անձի մշտական բնակության վայրի տրանսպորտային հանգույց (օդանավակայան, կայարան, կառամատույց), կամ բնակության վայրի մոտական բժշկական կենտրոն (բժշկի

ցուցման դեպքում) բժշկական ռեպատրիացիայի հետ կապված ծախսերը, այն դեպքում, եթե ստացիոնար բուժման հետ կապված ծախսերը կարող են գերազանցել Ապահովագրության Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը: Բժշկական ռեպատրիացիա իրականացվում է միայն հակացուցումների բացակայության դեպքում:

Բժշկական ռեպատրիացիայի հետ կապված ծախսերը հատուցվում են Ապահովագրության Վկայագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Ընդ որում, Ապահովագրողը չի հատուցում Ապահովագրված անձի՝ մշտական բնակության վայր ժամանելուց հետո ստացած բժշկական և այլ ծառայությունների ծախսերը:

5.4.4.Ճանապարհորդության վայրից մինչև Ապահովագրված անձի մշտական բնակության վայրի տրանսպորտային հանգույց (օդանավակայան, կայարան, կառամատույց), կամ բնակության վայրի մոտական բժշկական կենտրոն (բժշկի ցուցման դեպքում) բժշկական տեղափոխման հետ կապված ծախսերը այն դեպքում, եթե Ապահովագրված անձին տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետևանքով բժշկական ցուցում է տրվել տեղափոխման հատուկ պայմաններ: Ընդ որում, Ապահովագրողը չի հատուցում Ապահովագրված անձի՝ մշտական բնակության վայր ժամանելուց հետո ստացած բժշկական և այլ ծառայությունների ծախսերը:

Բժշկական տեղափոխումը իրականացվում է բուժող բժշկի գրավոր երաշխավորությունների (թռիչքի թույլտվություն) խիստ պահպանմամբ, և հատուցվում է ապահովագրության Պայմանագրի համապատասխան ապահովագրական գումարի շրջանակներում:

Ապահովագրողը հատուցում է հետևյալ ծախսերը (եթե դրանք ցուցված են բժշկի կողմից).

ա) Բժշկական կենտրոնից, որտեղ Ապահովագրված անձը բուժում էր ստանում, շտապօգնության մեքենայով մինչև ժամանակավոր գտնվելու երկրի այն տրանսպորտային հանգույց (օդանավակայան, կայարան) տեղափոխման ծախսերը, որն ունի Ապահովագրված անձի մշտական բնակության երկրի բնակավայրի հետ ուղիղ միջազգային հաղորդակցություն,

բ) Ապահովագրված անձի մշտական բնակության վայրի տրանսպորտային հանգույց (օդանավակայան, կայարան) հասնելու՝ մեկ ուղղությամբ էկոնոմ դասի տոմսի ծախսը,

գ) Ուղեկցող անձի ծախսերը,

դ) Բժշկական կենտրոնի, որում Ապահովագրված անձը շարունակելու է բուժումը, շտապօգնության մեքենայով Ապահովագրված անձին այդ բժշկական կենտրոն տեղափոխման ծախսերը:

Ապահովագրված անձը պարտավոր է անել իրենից կախված ցանկացած գործողություն չօգտագործված տոմսերը վերադարձնելու և դրանց արժեքը Ապահովագրողին հատուցելու համար: Սույն պայմանին չհետևելու դեպքում Ապահովագրողը իրավասու է Ապահովագրված անձին հատուցվող ծախսերի գումարից պահել չօգտագործված տոմսերի արժեքին համապատասխան գումարը:

5.4.5.Որոնողափրկարարական աշխատանքների համար, Աջակցման Կենտրոնը կազմակերպում է որոնողափրկարարական աշխատանքներ՝ Ապահովագրվածի գտնվելու վայրը որոշելու, նրան առաջին բուժօգնություն ցուցաբերելու, Ապահովագրված անձին տարհանելու նպատակով իրականացվող գործողություններ, եթե վերջինս ի վիճակի չէ ինքնուրույն տեղափոխվել բժշկական հաստատություն կամ այնպիսի վայր, որտեղ Ապահովագրված անձը կհանձնվի շտապօգնության ծառայությունը:

5.5. Տրանսպորտային ծախսեր, մասնավորապես.

5.5.1. Ապահովագրված անձի մշտական բնակության վայր ժամանելու ծախսերը միակողմանի ուղղությամբ էկոնոմ կարգով, մինչև ժամանակավոր կացության երկրում գտնվող օդանավակայան կամ երկաթուղային կայարան ժամանելու ծախսը, որն ունի ուղիղ միջազգային հաղորդակցային կապ Ապահովագրված անձի մշտական բնակության երկրի հետ: Նշված ծախսերը հատուցվում են, եթե Ապահովագրված անձի ստացիոնար բուժում ստանալու պատճառ հանդիսացող Ապահովագրական պատահարի ի հայտ գալու հետևանքով Ապահովագրված անձի չվերթը տեղի չի ունեցել նախատեսված ժամանակին, այսինքն այն օրը, որը նշված է Ապահովագրված անձի ուղևորման փաստաթղթերում: Ապահովագրված անձը պարտավոր է անել իրենից կախված ցանկացած գործողություն չօգտագործված տոմսերը վերադարձնելու և դրանց արժեքը Ապահովագրողին հատուցելու համար: Սույն պայմանին չհետևելու դեպքում Ապահովագրողը իրավասու է Ապահովագրված անձին հատուցվող ծախսերի գումարից պահել չօգտագործված տոմսերի արժեքին համապատասխան գումարը

5.5.2.Ճանապարհորդության մեջ գտնվելու ընթացքում Ապահովագրված անձի հետ գտնվող անչափահաս երեխաների միակողմանի ուղղությամբ, էկոնոմ կարգով իրենց բնակության վայր մեկնելու ծախսերը, եթե երեխաները մնացել են

առանց հսկողության՝ Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած Ապահովագրական պատահարի հետևանքով: Անհրաժեշտության դեպքում Ապահովագրողը կազմակերպում և ֆինանսավորում է երեխաների ուղեկցումը:
5.5.3.Ապահովագրված անձի բարեկամներից մեկի երկկողմանի ուղղությամբ (մշտական բնակության վայրից և հետադարձ) էկոնոմ կարգի տոմսերի ծախսը, եթե միայնակ ճանապարհորդող Ապահովագրված անձի հիվանդանոցում գտնվելու ժամանակը գերազանցում է 10 (տասը) օրը: Ընդ որում բարեկամի ճանապարհորդության վայրում գտնվելու ծախսերը Ապահովագրողը չի հոգում:

5.6. Ապահովագրված անձի տեղափոխման միջոցները (5.4.1 – 5.5.5 կետեր) որոշվում են Ապահովագրողի/Աջակցման Կենտրոնի կողմից՝ հիմք ընդունելով բժշկական ցուցումները: Ընդ որում Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում տեղափոխողի ժամանակացույցին չհետևելու հետևանքների համար:

5.7. Ետմահու ռեպատրիացիայի ծախսերը, մասնավորապես.
5.7.1. Աջակցման կենտրոնի կողմից արտոնված ծախսերը՝ կապված մինչև Ապահովագրված անձի մշտական բնակության երկիրը մարմնի ետմահու ռեպատրիացիայի հետ, եթե նրա մահը Ապահովագրական պատահարի հետևանք է:
Հետմահու ռեպատրիացիայի հետ կապված ծախսերը հատուցում են Ապահովագրության Վկայագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Ընդ որում Ապահովագրողի կողմից չեն հատուցվում Ապահովագրված անձի մշտական բնակության երկրում հուղարկավորության հետ կապված ծախսերը:
Եթե Ապահովագրողը ժամանակին օբյեկտիվ պատճառներով տեղեկացված չի եղել տեղի ունեցած պատահարի վերաբերյալ և չի կազմակերպել մարմնի ռեպատրիացիան, և այն վճարել են այլ անձինք, Ապահովագրողը իրավունք ունի վերջիններիս հատուցել համապատասխան ծախսերը՝ ապահովագրության Պայմանագրով սահմանված սահմանաչափերի շրջանակներում: Ընդ որում, Ապահովագրողը իրավունք ունի հատուցել նման ծախսերը մասնակի՝ հիմնվելով Աջակցման Կենտրոնի կողմից տվյալ տարածաշրջանում ռեպատրիացիայի կազմակերպման ծախսերի միջին արժեքների վրա, եթե գործողությունների չհամաձայնեցումը հանգեցրել է Ապահովագրողի ծախսերի աճին:

5.8. Ապահովագրության Պայմանագրով կարող են նախատեսվել Կանոնների 5.2 – 5.7 կետերում նշված ծախսերի ավելի հակիրճ թվարկում:

5.9. Կետը համարվում է ուժը կորցրած

5.10. Ապահովագրության Պայմանագրի գործողության ընթացքում սույն Կանոնների 4.4.2 կետում նշված իրադարձությունների տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը հատուցում է Իրավաբանական խորհրդատվության կազմակերպման աջակցության հետևյալ ծախսերը.
5.10.1. Անհրաժեշտության դեպքում Ապահովագրողի Աջակցության Կենտրոնը Ապահովագրված անձին ցուցաբերում է իրավաբանի խորհրդատվություն ստանալու հետ կապված օգնություն, ինչպես նաև Ապահովագրության Վկայագրի գործողության ընթացքում և Վկայագրում նշված պետության տարածքում գտնվելու ընթացքում քրեական և քաղաքացիական հետաքննության դեպքերում:
5.10.2. Ապահովագրության Պայմանագրով կարող են նախատեսվել նաև իրավաբանական ծառայությունների մատուցման ծախսերի հատուցում:
Ապահովագրված անձին իրավական (իրավաբանական) օգնության որակի համար պատասխանատվություն է կրում միայն այդպիսի օգնություն տրամադրած անձը:

5.10.3. Ապահովագրության Պայմանագրով կարող են նախատեսվել նաև իրավաբանական օգնության ծախսերի հատուցում՝ փաստաթղթերի գողության դեպքում, ինչպես նաև կորած փաստաթղթերի փնտրման և/կամ Հայաստանի

Հանրապետությունում կրկնօրինակների ձևակերպման ծախսերը (արտասահմանյան անձնագիր վիզայով, ճամփորդական փաստաթղթեր):

5.11. Ապահովագրության Պայմանագրի գործողության ընթացքում սույն Կանոնների 4.4.3 կետում նշված իրադարձությունների տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը հատուցում է Ճանապարհին տեխնիկական աջակցության կազմակերպման հետևյալ ծախսերը.

5.11.1. Անհրաժեշտության և ապահովագրության Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում Ապահովագրողի Աջակցման Կենտրոնը կազմակերպում է թեթև մարդատար ավտոտրանսպորտային միջոցի էվակուացիա խափանման կամ ՃՏՊ վայրից, եթե Ապահովագրված անձի թեթև մարդատար ավտոտրանսպորտային միջոցը ինքնուրույն չի կարող տեղաշարժվել՝ խափանման կամ ՃՏՊ հետևանքով վերջինիս վնասի դեպքում:

5.11.2. Աջակցման Կենտրոնը կազմակերպում է թեթև մարդատար ավտոտրանսպորտային միջոցի էվակուացիան խափանման կամ ՃՏՊ վայրից մինչև մոտակա սպասարկման կենտրոն:

Էվակուացիայի կազմակերպումը նշանակում է.

ա) Խափանման կամ ՃՏՊ վայր հատուկ տեխնիկայի և մասնագետների այցելություն՝ վթարված կամ անսարք ավտոմեքենայի տեղափոխման համար,

բ) Ավտոմեքենայի բարձում և ամրացում,

գ) Էվակուացում (տեղափոխում),

դ) Վթարված կամ անսարք մեքենայի բեռնաթափում:

5.11.3. Անհրաժեշտության և ապահովագրության Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում Ապահովագրողի Աջակցման Կենտրոնը կազմակերպում է վարորդի և ուղևորների տեղափոխումը ճամփորդության երկրի բնակության վայր, եթե Ապահովագրված անձի թեթև մարդատար ավտոտրանսպորտային միջոցը ինքնուրույն չի կարող տեղաշարժվել՝ խափանման կամ ՃՏՊ հետևանքով վերջինիս վնասի դեպքում:

5.12. Ապահովագրության Պայմանագրում Կանոնների 4.4.2 – 4.4.3 կետերում նշված իրադարձությունների ներառման դեպքում Ապահովագրողը ապահովագրական պատահարի դեպքում հատուցումը իրականացնում է ապահովագրության Պայմանագրով սահմանված սահմանաչափերի շրջանակներում:

5.13. «Բուժօգնություն» ռիսկով քրոնիկական հիվանդությունների սրացումների հետ կապված ծախսերը հատուցվում են ապահովագրության Պայմանագրով սահմանված սահմանաչափերի շրջանակներում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

5.14. Աջակցման Կենտրոնը կազմակերպում է Կանոնների 5.10, 5,11 կետերով նախատեսված անհրաժեշտ օգնության տրամադրումը՝ Ապահովագրված անձի ժամանակավոր գտնվելու վայրի ենթակառուցվածքներին, տեղական իրավաբանական ծառայությունների և կազմակերպությունների, Հայաստանի հանրապետության հյուպատոսական ծառայությունների, տեխնիկական աջակցության և ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կայանների աշխատանքային կարգի/ռեժիմի համապատասխան:

5.15. ԱՄՆ-ի տարածքում 5.2 կետում նշված ծախսերի համար սահմանվում է առավելագույն սահմանաչափ օրական 1500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

6.1. Ապահովագրական գումարը ապահովագրության պայմանագրով սահմանվող դրամական գումար է, որից ելնելով սահմանվում է ապահովագրավճարի չափը և ապահովագրական պատահարի ժամանակ ապահովագրական հատուցման չափը: Ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի համաձայնությամբ: Ապահովագրության Վկայագրի գործողության ընթացքում տեղի ունեցած մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների գծով հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Ապահովագրության Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը:

6.2. Ապահովագրավճար է համարվում ապահովագրության համար վճարվող գումարը, որն, Ապահովագրության պայմանագրի համաձայն, Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին (նրա լիազոր ներկայացուցչին):

6.3. Ապահովագրավճարը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ համաձայն իր սակագների: Այն դեպքում, երբ Ապահովագրողը որոշում է կայացնում բարձր վտանգի հետ կապված գործունեություն իրականացնող անձանց ապահովագրելու, այդ թվում նաև 4.7.1 կետով նախատեսված, ինչպես նաև մինչև 99 տարեկանից բարձր անձանց ապահովագրություն, ապա նրանց Ապահովագրավճարը սահմանվում է Ապահովագրողի կողմից հաշվարկված համեմատաբար բարձր գործակիցներով:

6.4. Ապահովագրավճարը վճարվում է Ապահովադրի կողմից միանվագ ապահովագրության ամբողջ ժամանակահատվածի համար, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով:

6.5. Ապահովագրավճարը կարող է վճարվել կանխիկ կամ անկանխիկ: Անկանխիկ վճարման դեպքում ապահովագրավճարը համարվում է վճարված Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտք լինելու ամսաթվից: Կանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի դրամարկղ վճարելու պահից (համաձայն լիազոր ներկայացուցչի վճարային կտրոնի):

6.6. Կողմերի համաձայնությամբ ապահովագրավճարը կարող է սահմանվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Ապահովագրավճարը սահմանվում է արտարժույթով և վճարվում է ՀՀ դրամով տվյալ օրվա ՀՀ Կենտրոնական Բանկի փոխարժեքով, եթե կողմերի համաձայնությամբ այլ փոխարժեք սահմանված չէ:

6.7. Ապահովագրավճարը պետք է վճարվի նախքան ապահովագրության պայմանագրի (Վկայագրի) ստացումը, սակայն ոչ ուշ քան պայմանագրի կնքման դիմումի ներկայացման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:

6.8. Եթե ապահովագրավճարը ապահովագրության պայմանագրով սահմանված պայմաններով չի վճարվել, ապա ապահովագրության պայմանագիրը համարվում է ուժի մեջ չմտած և չի առաջացնում որևէ հետևանքներ Կողմերի համար (եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ):

6.9. Ապահովագրավճարի չափը սահմանվում և նշվում է ապահովագրության պայմանագրում/վկայագրում կամ ապահովագրության պայմանագրի անբաժան մասը հանդիսացող վճարման հաշվում:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովագրված անձի ճանապարհորդության մեջ գտնվելու ժամանակով, սակայն մեկ տարուց ոչ ավել, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով:

7.2. Եթե Ապահովագրության ժամանակահատվածում Ապահովագրության պայմանագրով նախատեսված է Ապահովագրված անձի բազմաթիվ ուղևորություններ, ապա Ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն պայմանագրով սահմանված ապահովագրված օրերի համար: Ապահովագրության պայմանագրով սահմանված տարածք Ապահովագրված անձի կատարած յուրաքանչյուր ուղևորության ժամանակ Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրված օրերի քանակը ավտոմատ կերպով պակասեցվում է ապահովագրության պայմանագրով սահմանված տարածքում գտնվելու օրերի քանակով: Ապահովագրողի պատասխանատվությունը դադարում է Ապահովագրության Վկայագրով սահմանված օրերի քանակի սպառմամբ:

7.3. Եթե մեկ տարի ժամկետով կնքված ապահովագրական պայմանագիրը նախատեսվում է Ապահովագրված անձի բազմաթիվ ուղևորություններ, ապա ապահովագրության տևողությունը սահմանվում է յուրաքանչյուր ուղևորության առաջին 90 օրվա համար, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով

7.4. Ապահովագրության պայմանագիրը չի գործում՝

- այն երկրներում, որտեղ Ապահովագրված անձն ունի գրանցում, հանդիսանում է տվյալ երկրի քաղաքացի կամ այդ երկրում առավելապես բնակվող:
- ՀՀ և ԼՂՀ տարածքներում, եթե հատուկ նշում կատարված չէ ապահովագրության վկայագրում:

7.5. Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում պայմանագրի կնքման օրվան հաջորդող օրվա 0:00 ժամից, սակայն ոչ շուտ քան Ապահովադրի կողմից ապահովագրության ողջ ժամկետի համար ապահովագրավճարի վճարման օրվանից և միայն մշտական բնակության երկրից արտասահմանյան ուղևորությունների ժամանակ Ապահովագրված անձի կողմից տվյալ երկրի պետական սահմանը հատելուց հետո (անձնագրում սահմանային ծառայությունների նշում), եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ընդ որում, Ապահովագրության Վկայագրի կնքման օր է համարվում վկայագրի տրամադրման կամ պայմանագրի կնքման օրը, եթե ապահովագրության պայմանագիրը կազմված է մեկ փաստաթղթի տեսքով:

7.6. Եթե Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ավարտի մոտենալու պահին Ապահովագրված անձի ճանապարհորդությունից վերադարձը հնարավոր չէ ապահովագրական պատահարով պայմանավորված վերջինիս հոսպիտալացման պատճառով, որը հաստատվում է համապատասխան բժշկական արձանագրությամբ՝

7.7. Ապահովագրողը կատարում է սույն Կանոնների 4-րդ բաժնում նախատեսված և տվյալ պատահարով պայմանավորված իր պարտականությունները 4 (չորս) շաբաթվա ընթացքում՝ հաշված ապահովագրության պայմանագրում, որպես ապահովագրության ավարտի ամսաթիվ սահմանված օրվանից:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն Կանոնների համաձայն ապահովագրության Պայմանագիրը պետք է կնքվի նախքան ապահովագրված անձի կողմից պայմանագրում նշված ապահովագրության տարածք/երկիր մուտք գործելը, եթե այլ բան նախատեսված չէ Պամանագրով: Սույն պայմանի խախտմամբ կնքված Պայմանագրերը համարվում են անվավեր և ուժի մեջ չմտած:

8.1.1. Ապահովագրության Պայմանագիրը կարող է կնքվել.

ա) ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ պաշտոնական կայքի միջոցով՝ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով,

բ) Ապահովադրի կողմից Ապահովագրողին կամ վերջինիս ներկայացուցչին ստանդարտ ընթացակարգով գրավոր կամ բանավոր դիմելու միջոցով:

8.1.2. Ապահովագրության Պայմանագիրը ձևակերպվում է ապահովագրողի կողմից ստորագրված Վկայագրի տեսքով՝ կցելով կամ հղում տալով սույն Կանոններին:
Էլեկտրոնային եղանակով կնքվող Պայմանագրերի դեպքում Ապահովագրողը Ապահովադրին է տրամադրում էլեկտրոնային ստորագրված Վկայագիրը:

8.2. Ապահովագրության Պայմանագրի կնքումը:
8.2.1. Ապահովադիրը Ապահովագրողին կամ վերջինիս լիազոր ներկայացուցչին ապահովագրության Պայմանագիր կնքելու մտադրության մասին բանավոր կամ գրավոր դիմելու դեպքում տրամադրում է հետևյալ տվյալները.
ա) Ապահովադրի անուն, ազգանուն, հայրանունը,
բ) Ապահովագրված անձի՝ անձնագրում նշված ձևով լատինատառ անուն, ազգանուն, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն,
գ) Իրավաբանական անձ Ապահովադրի դեպքում՝ իրավաբանական հասցեն, հեռախոսահամարը, բանկային հաշվեհամարը,
դ) Ապահովագրված անձանց ցանկը, եթե Ապահովադիրը իրավաբանական անձ է,
ե) Հայաստանի տարածքից դուրս գալու և վերադառնալու պլանավորվող ամսաթվերը, կամ պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրված օրերի քանակը
զ) Երկիրը կամ տարածաշրջանը, որտեղ պետք է գործի ապահովագրության Պայմանագիրը,
է) Անհրաժեշտության դեպքում՝ ճամփորդության նպատակը,
ը) Ապահովագրական գումարը,
թ) Ապահովագրական նախընտրած ծածկույթը/փաթեթը,
ժ) Անհրաժեշտության դեպքում՝ տեղեկատվություն այն երկրների մասին, որտեղ Ապահովագրված անձը հանդիսանում է երկքաղաքացի, քաղաքացի, կամ ունի կացության թույլտվություն,
ի) Շահառուի մասին տեղեկատվություն:

8.3. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել իրեն հայտնի բոլոր այն հանգամանքները, որոնք կարող են ռիսկի գնահատման համար նշանակալից ազդեցություն ունենալ:

8.4. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին տեղեկացնել Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում իրեն հայտնի ապահովագրական ռիսկերի բոլոր փոփոխությունների մասին:

8.5. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է առանց Ապահովագրված անձի բժշկական արձանագրության: Ապահովագրողի պահանջով Ապահովադիրը պետք է լրացնի հարցաթերթիկ:

8.6. Ապահովագրության պայմանագրի կնքման փաստը հաստատվում է Ապահովագրողի կողմից Ապահովադրին հանձնվող Ապահովագրության Վկայագրով և դրան կցված սույն Ապահովագրության Կանոններով:

8.7. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրված անձը ազատում է բժիշկներին Ապահովագրողի հանդեպ գաղտնիության պարտավորությունից:

8.8. Ապահովագրողն իրավունք ունի առանց որևէ բացատրության մերժել ապահովագրության պայմանագրի կնքումը:

9. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Եթե ապահովագրության պայմանագրով և/կամ սույն Կանոններով սահմանված է Աջակցման Կենտրոն դիմելու պարտադիր պահանջ, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը (նրա ներկայացուցիչը) պարտավոր է.

9.1.1. Մինչ բժշկական հաստատություն դիմելը/այցելելը, սույն կանոններով և ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ ծառայություններ ստանալը/կազմակերպելը/վճարելը՝ ապահովագրության վկայագրում նշված հեռախոսահամարով տեղեկացնել Ապահովագրողի Աջակցության Կենտրոնին պատահարի մասին և հայտնել հետևյալ տեղեկատվությունը՝

ա) Ապահովագրված անձի անուն, ազգանուն,

բ) Ապահովագրության վկայագրի համարը,

գ) Անհրաժեշտ օգնության բնույթը,

դ) Գտնվելու վայրը և հեռախոսահամարը հետադարձ կապի համար:

9.1.2. Բժշկական օգնությունը ստանալ Աջակցության կենտրոնի օպերատորի հրահանգներին խիստ համապատասխան: Սույն կանոններով նախատեսված բժշկական և այլ օգնությունը Ապահովագրված անձին կարող է տրամադրվել միայն այն երկրում, որտեղ տեղի է ունեցել ապահովագրական պատահարը, եթե ապահովագրական պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.1.3. Մինչ անհրաժեշտ օգնություն ստանալը, բժշկական անձնակազմին ներկայացնել ապահովագրության վկայագիրը:

9.1.4. Վճարել չհատուցվող գումարը, եթե ապահովագրության պայմանագրով այն նախատեսված է (նշված է ապահովագրության վկայագրում):

9.1.5. Համաձայնեցնել իր գործողությունները և հետևել Աջակցության կենտրոնի օպերատորի ցուցումներին:

9.1.6. Եթե ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը գերազանցում է ապահովագրված օրերի քանակը, ապա Ապահովագրված անձը պարտավոր է Ապահովագրողի Աջակցության կենտրոնին փաստաթղթորեն ապացուցել, որ բժշկական և/կամ բժշկատրանսպորտային օգնության համար դիմելու պահին ապահովագրության ժամկետը (ապահովագրված օրերի քանակը) ավարտված չի եղել՝ ներկայացնելով իր անձնագիրը, որտեղ սահմանապահ մարմինների կողմից կատարվել են ՀՀ սահմանը հատելու վերաբերյալ համապատասխան նշումներ, և այլ փաստաթղթեր:

9.1.7. Հետևել բժշկի նշանակումներին և բժշկական հաստատության կողմից հաստատված կարգին:

9.1.8. Ապահովագրական պատահարի ժամանակ Աջակցության կենտրոնի հետ կապնվելու անհնարինության դեպքում, դա անել հնարավորինս շուտ և ներկայացնել ապահովագրության պայմանագիրը ՝ ընդ որում երրորդ անձանց կողմից առաջարկվող կամ արդեն իսկ մատուցված ծառայությունների համար չկատարելով որևէ վճարում առանց Աջակցության կենտրոնի՝ դիմումը գրանցող օպերատորի պաշտոնական համաձայնության:

9.1.9. Սույն կանոնների 9.1 կետի պահանջները չկատարելու դեպքում՝ Ապահովագրողին ներկայացնել գրավոր բացատրություն՝ համապատասխան հաստատող փաստաթղթերի ներդիրով:

9.2. Աջակցության կենտրոնը կազմակերպում է ապահովագրության պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը Ապահովագրված անձի ժամանակավոր բնակության վայրի ենթակառուցվածքների, տեղական բուժհաստատությունների/բժիշկների և շտապօգնության, հյուպատոսական և այլ ծառայությունների, այդ թվում՝ ռեպատրիացիայի կազմակերպմամբ, ինչպես նաև ռեպատրիացիայի և տրանսպորտային միջոցի տարհանման

իրականացման համար փաստաթղթերի տրամադրմամբ և կատարմամբ զբաղվող կազմակերպությունների աշխատանքային ժամերին և աշխատանքի կանոնակարգերին համապատասխան: Ապահովագրողը, սույն կանոնների 0-րդ բաժնով սահմանված կարգով, Աջակցության կենտրոնին վճարում է Ապահովագրված անձին մատուցված ծառայությունների համար: Աջակցության կենտրոնն իրավունք ունի, Ապահովագրված անձին (նրա ներկայացուցչին) ինքնուրույն և իր հաշվին, առաջարկել դիմել անհրաժեշտ բժշկական օգնության, այդ թվում՝ տեղական շտապօգնության ծառայությունների, և (կամ) ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ ծառայությունների:

9.3. Սույն կանոնների 9.1 կետի պայմանները խախտելու դեպքում, Ապահովագրված անձի կրած ծախսերը հատուցման ենթակա չեն, եթե չհամաձայնեցված գործողությունները հանգեցրել են Ապահովագրողի ծախսերի ավելացմանը և (կամ) հատուցման ներկայացված անհիմն բարձր հաշիվ-ապրանքագրերի:

9.4. Եթե ապահովագրության պայմանագրով (Վկայագրով) նախատեսված չէ Աջակցության կենտրոն դիմելու պարտադիր պայման, Ապահովագրված անձն իրավունք ունի ստանալ բժշկական ծառայություններ հետևյալ եղանակներից մեկով՝

9.4.1. Ինքնուրույն դիմել մոտակա բժշկական հաստատություն, ինքնուրույն վճարել մատուցված ծառայությունների համար: Ընդ որում Ապահովագրողը չի ձեռնարկում որևէ միջոցառում սույն կանոնների 9.9 կետով սահմանված տեղեկատվության պարզաբանման և փաստաթղթերի ստացման նպատակով:

9.4.2. Կանոնների 9.1 կետում նկարագրված ընթացակարգին խիստ համապատասխան:

9.5. Հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության ստացման, բժշկա-տրանսպորտային, տրանսպորտային ծառայություններից օգտվելու, ինչպես նաև ռեպատրիացիայի իրականացման դեպքում՝ ներառյալ հետմահու, Ապահովագրված անձը (նրա ներկայացուցիչը) պետք է խստորեն գործի 9.1 կետի պայմաններին համապատասխան, անկախ Աջակցության կենտրոն դիմելը պարտադիր է ապահովագրության պայմանագրով, թե՝ ոչ: 9.1 կետում նշված պայմանների խախտման դեպքում, անմիջապես Ապահովագրված անձի (նրա ներկայացուցչի) կողմից կատարված ծախսերը ենթակա չեն հատուցման:

9.6. Կորստի կամ վնասի չափը որոշվում է Ապահովագրված անձի կամ Ապահովագրված անձին ծառայություններ մատուցած այլ կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ հաշիվներ, բժշկական փաստաթղթեր, տրանսպորտային ընկերության, այլ կազմակերպությունների փաստաթղթեր, որոնք Ապահովագրված անձին ծառայություններ են մատուցել ապահովագրական պայմանագրի շրջանակներում, ապահովագրության տարածքում և ապահովագրական պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

9.7. Ապահովագրական հատուցման չափը որոշվում է Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ ապահովագրության պայմանագրին համապատասխան:

9.8. Եթե Ապահովադիրը դիմել է Աջակցության կենտրոն՝ համաձայն 9.1 կետի, և դա գրանցվել է Աջակցության կենտրոնի տվյալների բազայում և վերջինս կազմակերպել է Ապահովագրված անձի համար անհրաժեշտ բժշկական կամ այլ օգնություն, իսկ Ապահովագրված անձը հետագայում չի օգտվել այդ ծառայություններից (պայմանավորված ժամին չի եղել պայմանավորված վայրում, որտեղ բժիշկը պետք է կատարեր ստուգումը, չի ընդունել Ապահովագրված անձի բնակության վայր կանչված բժշկին), ինքնակամ հրաժարվել է Աջակցության կենտրոնի կողմից կազմակերպած, բժշկական հաստատություն (շտապօգնության ծառայություններ) կամ մշտական բնակության վայր տեղափոխումից և այլն, Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրված անձին հետադարձ պահանջ ներկայացնել՝ Աջակցության կենտրոնի փաստացի կրած և Ապահովագրողի կողմից վճարված օգնության մասով, որից Ապահովագրված անձը չի օգտվել (հրաժարվել է օգտվելուց):

9.9. Բժշկական և այլ ծախսերի ինքնուրույն վճարման դեպքում, ճանապարհորդությունից, որի ժամանակ տեղի է ունեցել ապահովագրական պատահարը, վերադառնալուց հետո 30 օրացույցային օրվա ընթացքում Ապահովագրված անձը, կատարած ծախսերի դիմաց հատուցում ստանալու համար, Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի բնօրինակները՝ այդ թվում ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը, կատարված ծախսերի փաստը և չափը հավաստող փաստաթղթերը.

9.9.1. Պատահարի առաջացման մասին գրավոր դիմում,

9.9.2. Դիմում՝ Աջակցության կենտրոն չդիմելու պատճառների հիմնավորմամբ, եթե Ապահովագրված անձը չի դիմել Աջակցության կենտրոն,

9.9.3. Ապահովագրության վկայագիր,

9.9.4. Բանկային քարտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովագրական հատուցումը անկանխիկ ստանալու դեպքում,

9.9.5. Ծննդյան վկայական, խնամակալության փաստաթուղթ, եթե ապահովագրական հատուցումը վճարվելու է անչափահաս/անգործունակ Ապահովագրված անձի ներկայացուցչին.

9.9.6. Ապահովագրված անձի (նրա ներկայացուցչի) կատարած ծախսերը և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի վճարման փաստը հաստատող փաստաթղթեր՝ նշելով մատուցված ծառայությունների ամսաթիվը և անվանումները, Ապահովագրված անձի ազգանունը, անունը, հայրանունը.

9.9.6.1. Բժշկական, բժշկա-տրանսպորտային ծախսերի փոխհատուցման համար.

9.9.6.1.1. Բժշկական փաստաթղթեր ախտորոշման, Ապահովագրված անձի բժշկական օգնության դիմելու ամսաթվի և առողջական վիճակի, բժշկական միջամտությունների և բուժման տևողության վերաբերյալ,

9.9.6.1.2. Տվյալ հիվանդության հետ կապված՝ բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսեր, որոնք ներառում են դեղատան կնիքը և ձեռք բերված դեղամիջոցների գները,

9.9.6.1.3. Լաբորատոր և ախտորոշիչ հետազոտությունների անցման ուղեգրեր՝ ամսաթվերի, անվանումների, հիմնավորումների և ծառայությունների արժեքների նշումներով,

9.9.6.1.4. Մատուցված ծառայությունների համար բժշկական հաստատությունների հաշիվները (պաշտոնական բլանկի վրա և համապատասխան կնիքով)՝ նշելով հիվանդի անունը, դիմելու ամսաթիվը, ախտորոշումը, բուժման տևողությունը, մատուցված ծառայություններն ըստ ամսաթվի և արժեքի, ինչպես նաև վճարման ենթակա ընդհանուր գումարը՝ վճարումը հաստատող փաստաթղթերի ներդիրով,

9.9.6.2. Տրանսպորտային ծախսերի, որոնողափրկարարական աշխատանքների ծախսերի փոխհատուցման համար.

9.9.6.2.1. Տրանսպորտային և այլ ընկերությունների, որոնողափրկարարական ծառայությունների, հեռահաղորդակցման ընկերությունների հաշիվներ՝ վճարումը հաստատող փաստաթղթերով, ում ծառայություններից Ապահովագրված անձը օգտվել է,

9.9.6.2.2. Ճամփորդական փաստաթղթերի բնօրինակներ,

9.9.6.2.3. Նստեցման կտրոնի բնօրինակ,

9.9.6.3. Ապահովագրված անձի բարեկամի ժամանման հետ կապված ծախսերը փոխհատուցելու համար՝

9.9.6.3.1. Ճամփորդական փաստաթղթերի բնօրինակ,

9.9.6.3.2. Նստեցման կտրոնի բնօրինակ,

9.9.6.3.3. Ապահովագրված անձի հետ ազգակցական կապը հաստատող փաստաթղթեր,

9.9.6.4. Հետմահու ռեպատրիացիայի ծախսերը փոխհատուցելու համար՝

9.9.6.4.1. Մահվան փաստը հաստատող փաստաթուղթ, որտեղ նշված է մահվան պատճառը և (կամ) դրան փոխարինող մեկ այլ փաստաթուղթ,

9.9.6.4.2. Մահվան վկայական,

9.9.6.4.3. Ոստիկանության արձանագրություն և (կամ) դրան փոխարինող այլ փաստաթուղթ, որտեղ նշված են դեպքի հանգամանքները (ՃՏՊ, երրորդ անձանց կողմից առողջությանը վնաս/մահ, բժշկական հաստատությունից դուրս Ապահովագրված անձի մահը հաստատող փաստաթուղթ),

9.9.6.4.4. Ապահովագրված անձի ռեպատրիացիայով զբաղվող կազմակերպությունների, այդ թվում՝ հետմահու, հաշիվներ՝ նշելով մատուցված ծառայությունների ամսաթվերը, անվանումներն ու արժեքները՝ կցելով վճարումը հաստատող փաստաթղթերը,

9.9.6.5. Կետը համարվում է ուժը կորցրած

9.9.6.6. Իրավաբանական օգնության կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝

9.9.6.6.1. Իրավաբանական ծառայությունների մատուցմամբ զբաղվող կազմակերպությունների հաշիվները, որտեղ նշված է մատուցվող ծառայությունների ամսաթվերը, անվանումները և արժեքները՝ կցելով վճարումը հաստատող փաստաթղթերը.

9.9.6.7. Ճանապարհին տեխնիկական աջակցություն տրամադրելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝

9.9.6.7.1. Ճանապարհին տեխնիկական աջակցության ծառայությունների մատուցմամբ և (կամ) վարորդի և ուղևորների տեղափոխմամբ զբաղվող կազմակերպությունների հաշիվներ, որտեղ նշված է մատուցվող ծառայությունների ամսաթվերը, անվանումները և արժեքները՝ կցելով վճարումը հաստատող փաստաթղթերը,

9.9.6.7.2. Վթարի վայրից արձանագրություն, եթե կազմվել է:

9.10. 9.9 կետում նշված փաստաթղթերի հետ միասին, Ապահովագրողին պետք է տրամադրվեն նաև դրանց բնօրինակները՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն պաշտոնական թարգմանությամբ:

9.11. Ապահովագրողը, ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը, կայացնում է սույն կանոնների 9.9-րդ կետում նշված պահանջվող փաստաթղթերից վերջինը ստանալու օրվանից 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետում Ապահովագրողն իրավունք ունի ստուգել ներկայացված փաստաթղթերը, ապահովագրական պատահարի հանգամանքների մասին հարցում կատարել համապատասխան կազմակերպություններից, Ապահովադրից և (կամ) Ապահովագրված անձից պահանջել գրավոր բացատրություններ՝ ապահովագրական պատահարի վերաբերյալ, ինչպես նաև որոշում կայացնել ապահովագրական հատուցման վճարման մասին կամ Ապահովագրված անձին (Շահառուին) ներկայացնել ապահովագրական հատուցման լրիվ կամ մասնակի մերժման հիմնավորված որոշում: Ապահովագրական պատահարի վերաբերյալ հավելյալ տեղեկատվության կամ փաստաթղթերի անհրաժեշտության դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական հատուցման որոշումը հետաձգել մինչև նշված տեղեկությունների / փաստաթղթերի ստացումը, բայց ոչ ավելի, քան 30 (երեսուն) օր՝ փաստաթղթերի ամբողջական փաթեթը Ապահովադրից (Ապահովագրված անձից, Շահառուից) ստանալու օրվանից, եթե վերոնշյալը սույն կանոնների 9.9-րդ կետում նշված փաստաթղթերի ցանկին է պատկանում: Եթե Ապահովագրողն օգտվել է ապահովագրական պատահարի հանգամանքների մասին տեղեկություններ ունեցող կազմակերպություններից տեղեկատվություն / փաստաթղթեր հարցում կատարելու իր իրավունքից, ապա այդ մասին տեղեկացնում է Ապահովագրված անձին (Ապահովադրին): Ապահովագրական հատուցման վճարումից հետո փաստաթղթերի բնօրինակները չեն վերադարձվում Ապահովագրված անձին (Ապահովադրին): Ապահովագրողն իրավունք ունի վճարել ապահովագրական հատուցումը նշված ժամկետից շուտ:

9.12. Ապահովագրված անձի ծախսերի փոխհատուցման համար Ապահովագրողն ընդունում է միայն վճարված հաշիվները:

9.13. Ապահովագրված անձի առողջական փաստացի վիճակի գնահատման նպատակով Ապահովագրողը, Ապահովագրված անձի համաձայնությամբ, իրավունք ունի կատարել հարցումներ և ստանալ տեղեկատվություն:

9.14. Ապահովագրողն իրավունք ունի, ապահովագրական պատահարի իսկությունը պարզելու համար, անցկացնել ներկայացված փաստաթղթերի անկախ բժշկական քննություն:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

10.1. Ապահովագրողն իրավունք ունի լրիվ կամ մասնակի մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն)՝

10.1.1. Ապահովագրողին չի ներկայացրել սույն կանոններով նախատեսված և ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, կամ ներկայացրել է փաստաթղթեր, որոնք կազմվել են համընդհանուր ընդունված կամ սույն Կանոններով սահմանված պահանջների խախտմամբ:

10.2. Եթե օրենքով և ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցման վճարումից, եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել.

10.2.1. Ատոմային պայթյունի, ճառագայթման, ռադիոակտիվ վարակի հետևանքով,

10.2.2. Ռազմական գործողությունների, ինչպես նաև զորավարժությունների կամ այլ ռազմական միջոցառումների հետևանքով,

10.2.3. Քաղաքացիական պատերազմի, ցանկացած տեսակի ժողովրդական հուզումների կամ գործադուլների հետևանքով:

10.3. Եթե Ապահովադիրը ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ կամ դրա գործողության ընթացքում, միտումնավոր կեղծ տեղեկատվություն է տրամադրել ապահովագրական պատահարի առաջացման հավանականության կամ հնարավոր վնասների չափի որոշման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել անվավեր ճանաչել պայմանագիրը և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հետևանքները:

10.4. Ապահովագրողն իրավունք չունի հրաժարվել ապահովագրական հատուցման վճարումից, օրենքով կամ Ապահովագրության պայմանագրով չնախատեսված դեպքերում:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

11.1. Պայմանագրի պայմանների փոփոխությունները կատարվում են Ապահովադրի դիմումի հիման վրա, որը ներկայացվել է Ապահովագրողին մինչև ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելը:

11.1.1. Ապահովագրության պայմանների փոփոխության դեպքում (ապահովագրության ժամկետի ավելացում/կրճատում, լրացուցիչ ռիսկերի ներառում/բացառում, ապահովագրական գումարի չափի, ապահովագրության տարածքի փոփոխություն և այլն) Ապահովագրողը վերահաշվարկում է ապահովագրավճարը, այդ թվում կողմերի արտարժույթով արտահայտված պարտականությունները՝ փոխարկելով Պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ հայտարարած դրամի փոխարժեքով:

11.1.2. Ապահովագրավճարի հավելում ենթադրող փոփոխություններ կատարելիս (ապահովագրության ժամկետի ավելացում, հավելյալ ռիսկերի ներառում, ապահովագրական գումարի ավելացում, ապահովագրության տարածքի ընդլայնում և այլն), Ապահովագրողը թողարկում է ապահովագրավճարի հավելավճարի վճարման հաշիվ՝ համաձայն Պայմանագիրը կնքելիս օգտագործված սակագների:

11.1.3. Ապահովագրավճարի նվազում ենթադրող փոփոխություններ կատարելիս (ապահովագրության ժամկետի կրճատում, ռիսկերի բացառում, ապահովագրական գումարի, ապահովագրված անձանց քանակի, ապահովագրական տարածքի կրճատում և այլն), Ապահովագրողը վերադարձնում է ապահովագրավճարի հավելյալ մասը՝ համաձայն Պայմանագիրը կնքելիս օգտագործված սակագների:

11.1.4. Սույն կանոնների 11.1.3 կետին համապատասխան փոփոխություններ կատարելու համար Ապահովադիրը պետք է դիմի Ապահովագրողին և տրամադրի հետևյալ փաստաթղթերի բնօրինակները.
ա) Ապահովադրի դիմում,
բ) Ապահովագրության վկայագիր,
գ) Ապահովագրված անձի (անձանց) անձնագիր,
դ)Ապահովադրի բանկային հաշվի տվյալներ՝ ապահովագրավճարի անկանխիկ վերադարձ իրականացնելու համար, եթե կա ապահովագրավճարի (ապահովագրավճարի մի մասի) վերադարձման և անկանխիկ փոխանցման հիմքեր,
զ) ապահովագրավճարի (ապահովագրավճարի մի մասի) վերադարձի և այն ստանալու իրավունքը հիմնավորող այլ փաստաթղթեր:
Պայմանագրի պայմանների փոփոխությունները և ապահովագրավճարի (ապահովագրավճարի մի մասի) վերադարձը կատարվում են միայն այն դեպքում, եթե Ապահովագրված անձը չունի ապահովագրության պայմանագրում նշված երկիր (տարածաշրջան) մեկնելու համար գործող վիզա կամ եթե ապահովագրված անձին տրվել է ճամփորդական վիզա մինչև ապահովագրության վկայագրի տրամադրումը:

11.2. Ապահովագրության պայմանագիրը լուծվում է, հետևյալ դեպքերում՝
11.2.1. Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է (ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրության ավարտի ամսաթվի ժամը 24.00-ին),
11.2.2. Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում վճարելու գծով իր պարտավորությունները՝ Ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի չափով,
11.2.3. Սուբյեկտի կողմից անձնական տվյալների մշակման վերաբերյալ իր համաձայնության ամբողջական հետկանչումը, բացառությամբ երբ ապահովագրության պայմանագրի կատարման համար սուբյեկտի համաձայնությունը՝ անձնական տվյալների մշակման վերաբերյալ, չի պահանջվում,
11.2.4. Ապահովադիրը ցանկացած պահի հրաժարվել է պայմանագրից, եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը չի վերացել կամ ապահովագրական ռիսկի առկայությունը չի դադարել՝ պայմանավորված ապահովագրական պատահարից այլ հանգամանքներով,
11.2.5. Եթե ապահովագրական պատահարի հավանականությունը վերացել է, և ապահովագրական ռիսկի առկայությունը դադարել է՝ ապահովագրական պատահարից այլ հանգամանքներով,
11.2.6. Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ Պայմանագիրը լուծվել է,
11.2.7. ՀՀ գործող օրենսդրությամբ, սույն կանոններով կամ ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

11.3. Ապահովագրության պայմանագրի դադարեցումը.
11.3.1. Սույն կանոնների 11.2.1, 11.2.2, 11.2.5 կետերին համապատախան հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում, Պայմանագիրը դադարում է գործել այդ հիմքերի առաջացման պահից:
11.3.2. Սույն կանոնների 11.2.3, 11.2.4 կետերով նախատեսված հիմքերով ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում, Պայմանագիրը դադարում է գործել Ապահովադրի կողմից համապատասխան դիմում ներկայացնելու օրվանից, եթե Ապահովադրի դիմումում նշված չէ ապահովագրության պայմանագրի դադարեցման ավելի ուշ ժամկետ:
11.3.3. Սույն կանոնների 11.2.6 կետով նախատեսված հիմքերով ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում, Պայմանագիրը համարվում է լուծված՝ Կողմերի համաձայնագրի ստորագրման պահից, եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:
11.3.4. Սույն կանոնների 11.2.7 կետով նախատեսված հիմքերով ապահովագրության պայմանագրի դադարեցման դեպքում, Պայմանագիրը համարվում է դադարեցված ՀՀ գործող օրենսդրությամբ, սույն կանոններով, ապահովագրության պայմանագրի պայմաններով կամ Կողմերի համաձայնությամբ սահմանված օրվանից՝ կախված Պայմանագրի դադարեցման հիմքերից:
11.3.5. Ապահովագրողն ազատվում է պատահարի համար ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, եթե դրանք տեղի են ունեցել ապահովագրության պայմանագրի դադարեցումից կամ լուծումից հետո՝ սույն կետով սահմանված պայմաններին համապատասխան:

11.4. Ապահովագրավճարի վերադարձման կարգը.

11.4.1. Սույն կանոնների 11.2.1, 11.2.2, 11.2.3 կետերում նշված հիմքերով Պայմանագրի վաղաժամ լուծման դեպքում, ապահովագրավճարը համարվում է Ապահովագրողի կողմից ամբողջությամբ վաստակված և ենթակա չէ վերադարձման:

11.4.2. Սույն կանոնների 11.2.4 կետում նշված հիմքերով ապահովագրության պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում, Ապահովագրողը Ապահովադրին վերադարձնում է վճարված ապահովագրավճարի մի մասը՝ համաձայն ապահովագրության պայմանագրի գործողության փաստացի օրերի քանակի (ապահովագրության պայմանագրում նշված երկրում (տարածաշրջանում) գտնվելու փաստացի օրերի թվի): Սույն կանոնների 11.2.4-րդ կետում նշված հիմքերով ապահովագրության պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում, ապահովագրավճարը համարվում է Ապահովագրողի կողմից ամբողջությամբ վաստակված և վերադարձման ենթակա չէ, եթե՝

ա) Ապահովադիրը հայտարարում է Պայմանագրի դադարեցման մասին ապահովագրության ժամկետի ավարտից հետո,

բ) Եթե Ապահովագրված անձը (անձինք) ունի գործող վիզա ապահովագրության պայմանագրում նշված երկիր (տարածաշրջան) մեկնելու համար, որը տրամադրվել է Ապահովագրված անձին (անձանց) ապահովագրության պայմանագրի կնքումից հետո:

11.4.3. Սույն կանոնների 11.2.5 կետի նշված հիմքերով Պայմանագրի վաղաժամ լուծման դեպքում, եթե Ապահովագրված անձի վիզայի դիմումը մերժվել է, Ապահովագրողը վերադարձնում է Ապահովադրին վճարված ապահովագրավճարը ամբողջությամբ՝ 1,000 ՀՀ դրամին համաժեք գումարի պահումով:

11.4.4. Սույն կանոնների 11.2.5, 11.2.6 կետերի, բացառությամբ Կանոնների 11.4.3 կետով նախատեսված դեպքի, համաձայն ապահովագրության պայմանագրի գործողության դադարեցման դեպքում, Ապահովագրողը վերադարձնում է Ապահովադրին վճարված ապահովագրավճարի մի մասը՝ համաձայն ապահովագրության պայմանագրի գործողության փաստացի օրերի քանակի (ապահովագրության պայմանագրում նշված երկրում (տարածաշրջանում) գտնվելու փաստացի օրերի թվի)՝ ելնելով ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ սահմանված սակագներից:

11.5. Ապահովագրավճարի (ապահովագրավճարի չօգտագործված մասի) վերադարձի համար Ապահովադիրը, Ապահովագրողի պահանջով, տրամադրում է հետևյալ փաստաթղթերի բնօրինակները.

ա) Ապահովադրի դիմում,

բ) Ապահովագրության վկայագիր,

գ) Ապահովագրված անձի (անձանց) անձնագիր,

դ) Ֆիզիկական անձ Ապահովադրի անձնագիր,

ե) Ապահովադրի բանկային հաշվի տվյալներ, եթե կան հիմքեր Ապահովագրավճարի (ապահովագրավճարի մի մասի) վերադարձը անկանխիկ կատարելու և անկանխիկ եղանակով գումար փոխանցելու համար),

զ) Ապահովագրավճարի (ապահովագրավճարի մի մասի) վերադարձը և այն ստանալու իրավունքը հիմնավորող այլ փաստաթղթեր:

11.6. Ապահովագրության պայմանագրով ապահովագրավճարի վերահաշվարկը (վերադարձը) իրականացվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի կնքման պահին օգտագործված սակագների հիման վրա: Միևնույն ժամանակ, Պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում կողմերի արտարժույթով արտահայտված պարտավորությունները փոխարկվում են ՀՀ դրամի ըստ Պայմանագրի կնքման օրը ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի:

11.7. Սույն կանոնների 11.2.2, 11.2.4, 11.2.5 կետերում նշված դեպքերում՝ Ապահովադրի պահանջով, Պայմանագրի դադարեցման ժամանակ, ապահովագրավճարի վերադարձը կատարվում է Ապահովագրողի կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

12. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1. Ապահովագրողը պարտավոր է՝

12.1.1. Ապահովադրին փոխանցել սույն կանոնները կամ սույն կանոններից քաղվածք (ապահովագրության պայմանագրի պայմանները), որը կազմվել է սույն կանոնների դրույթների հիման վրա, վերաբերում է համապատասխան ապահովագրական պրոդուկտին և որի հիման վրա կնքվել է ապահովագրության պայմանագիրը, ինչի մասին ապահովագրության պայմանագրում կատարվում է նշում: Սույն կանոնները կարող են փոխանցվել Ապահովադրին՝ Ապահովագրողի ինտերնետային կայքում տեղադրված կանոնների հղումը կամ կանոնների տեքստը պարունակող ֆայլը, ուղարկելով Ապահովադրի տրամադրած էլ. փոստի հասցեին:

12.1.2. Ապահովագրության պայմանագրով և սույն կանոններով նախատեսված իրադարձությունների առաջացման դեպքում, սույն կանոնների 9.11-րդ կետով սահմանված ժամկետում, վճարել ապահովագրական հատուցումը կամ տրամադրել ապահովագրության հատուցման լրիվ կամ մասնակի մերժման հիմնավորում:

12.1.3. Պահպանել Ապահովադրի, Ապահովագրված անձի, Շահառուի, նրանց առողջական վիճակի, նրանց պատկանող գույքի մասին տեղեկատվության գաղտնիությունը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

12.1.4. Ապահովադրի, Ապահովագրված անձի, Շահառուի, ինչպես նաև ապահովագրության պայմանագիր կնքելու մտադրություն ունեցող անձանց պահանջով ներկայացնել ապահովագրության կանոնների և ապահովագրության պայմանագրերի դրույթները, ապահովագրության պայմանագրի ընթացքում ապահովագրական գումարի փոփոխման և ապահովագրավճարների հաշվարկման կարգը:

12.2. Ապահովադիրը պարտավոր է՝

12.2.1. Վճարել ապահովագրավճարը ապահովագրության պայմանագրով նախատեսված չափով և ժամկետներում:

12.2.2. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող՝ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները:

12.2.3. Ապահովագրված անձը, ապահովագրության պայմանագրով նախատեսված իր իրավունքից օգտվելու համար, պարտավոր է՝

12.2.4. Ապահովագրողի պահանջով անցնել բուժզննում՝ իր առողջական փաստացի վիճակը գնահատելու համար (բացառությամբ էլեկտրոնային եղանակով ապահովագրության պայմանագրի կնքման դեպքում):

12.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

12.3.1. Պայմանագիր կնքելիս պահանջել, որ Ապահովագրված անձը անցնի բժշկական զննություն՝ նրա առողջական փաստացի վիճակը գնահատելու համար (բացառությամբ էլեկտրոնային եղանակով ապահովագրության պայմանագրի կնքման դեպքում):

12.3.2. Ստուգել ապահովագրական պատահարի վերաբերյալ տրամադրված փաստաթղթերը՝ հայտարարված դեպքը ապահովագրական պատահար ճանաչելու և ապահովագրական հատուցման վճարի չափը որոշելու համար:

12.3.3. Տեղեկատվության հարցում կատարել այն կազմակերպություններից, որոնք տեղյակ են ապահովագրական պատահարի հանգամանքներից, ներառյալ Ապահովագրված անձի առողջական վիճակից:

12.3.4. Ապահովագրական պատահարի տեղի ունենալուց հետո իրականացնել Ապահովագրված անձի բժշկական հետազոտություն Ապահովագրողի կողմից նշված բժշկի մոտ:

12.4. Ապահովադիրն իրավունք ունի՝

12.4.1. Ստանալ ապահովագրության վկայագիրը (ապահովագրության պայմանագիրը) ժամանակին,

12.4.2. Ապահովագրողից պահանջել պարզաբանել ապահովագրության կանոններում և ապահովագրության պայմանագրերում պարունակվող դրույթները, Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական գումարի փոփոխությունների, ապահովագրավճարի հաշվարկման կարգը:

12.5. Ապահովագրված անձն իրավունք ունի՝

12.5.1. Ապահովագրական պայմանագրով և սույն կանոններով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում:

12.5.2. Ապահովագրողից պահանջել պարզաբանել ապահովագրության կանոններում և ապահովագրության պայմանագրերում պարունակվող դրույթները, պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական գումարի փոփոխությունների, ապահովագրավճարի հաշվարկման կարգը:

13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1. Ապահովագրության պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Եթե Կողմերը համաձայնության չեն գալիս, ապա գործը փոխանցվում է դատական քննման՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

14. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ / ՓԱԹԵԹՆԵՐ

14.1. «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ կողմից մատուցվում են աջակցության ապահովագրության հետևյալ ծրագրերը/փաթեթները.

- «Ունիվերսալ» (Universal),
- «Էկոնոմ» (Econom):

14.2. Աջակցության ապահովագրության վկայագիրը ծրագրերից որևէ մեկով կնքելիս վկայագրում պետք է կատարվի այդ մասին հատուկ նշում:

14.3. Վերոնշյալ ապահովագրական ծրագրերից յուրաքանչյուրով ապահովագրական ծածկույթը հետևյալն է.

14.3.1. «Ունիվերսալ» (Universal) - Պայմանագրով ապահովագրական պատահարներ են համարվում և Ապահովագրողի կողմից հատուցվում են Կանոնների 4.4.1 – 4.4.3 կետերով նախատեսված ծախսերը: Ապահովագրական գումարը և այլ փոփոխական պայմանները սահմանվում են ապահովագրության վկայագրով:

14.3.2. «Էկոնոմ» (Econom) - Ապահովագրության պայմանագիրը կնքվում է համաձայն «Ճանապարհորդության մեջ գտնվող անձանց աջակցության ապահովագրության կանոնների»: Պայմանագրով ապահովագրական պատահարներ են համարվում և Ապահովագրողի կողմից հատուցվում են Կանոնների 4.4.1 կետով նախատեսված ծախսերը:
Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության վկայագրով, ապա հատուցման առավելագույն սահմանաչափը յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար սահմանվում է 1,000 Եվրո:
Եթե ապահովագրության վկայագրով սահմանված է չհատուցվող գումար, ապա վերոնշյալ 1,000 Եվրո սահմանաչափը կիրառելի չէ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐ

1. Աջակցության ապահովագրության կանոնների (այսուհետ՝ Կանոններ) Հավելված 1-ով սահմանվում են Աջակցության ապահովագրության «Ունիվերսալ» (Universal) ծրագրի շրջանակներում Ապահովագրողի կողմից տրամադրվող «Էքստրիմ», «ՈՒղեբեռ», «Ուղևորության չեղարկում կամ հետաձգում», «Ժամկետների խափանում», «Գույքի ապահովագրություն ճամփորդության ընթացքում», «Վիզայի մերժում», «Կրուիզի չեղարկում», «Տնային կենդանիների ապահովագրություն ճամփորդության ընթացքում» հավելյալ ծածկույթների (թվով 8 հավելյալ ծածկույթները միասին հիշատակման դեպքում այսուհետ նաև՝ «Հավելյալ ֆուլլ (full) ծածկույթ») ապահովագրության տարրերը և այլ պայմանները:
2. Հավելված 1-ով հավելյալ ծածկույթների ապահովագրության տարրերը և այլ պայմանները սահմանվում են նաև Կանոններից տարբերվող այլ ապահովագրության կանոններին արված հղումների ձևով:
3. Ապահովագրողը «Ունիվերսալ» (Universal) ծրագրի շրջանակներում կարող է տրամադրել Ապահովադրին թվով 8 Հավելյալ ծածկույթներից որևէ մեկն առանձին, դրանց ցանկացած համադրությունը, այդ թվում՝ «Հավելյալ ֆուլլ (full) ծածկույթ»:
4. «Ունիվերսալ» (Universal) ծրագրի շրջանակներում Ապահովագրողի կողմից տրամադրվող Հավելյալ ծածկույթների վերաբերյալ Հավելված 1-ով սահմանված պայմանների և Կանոնների 1-ից 14-րդ գլուխներում նախատեսված պայմանների միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է Հավելված 1-ով սահմանված պայմաններին:
5. «Էքստրիմ» հավելյալ ծածկույթի շրջանակներում՝

5.1. Ապահովագրական պատահար է համարվում արտաքին, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ) չմտադրված, անկանխատեսելի պայմանների և հանգամանքների զուգադիպումը, որոնց դեպքում Ապահովագրված անձի կամքից անկախ վնաս է հասցվում նրա առողջությանը վտանգավոր հոբբիներով զբաղվելու արդյունքում (այդ թվում՝ լեռնամագլցում,

սառցամագլցում, լեռնագնացություն, ջրասուզություն, անկարգելով թռիչք, սքայսերֆինգ, դելտա/պարապլանիզմ, որսորդություն, ավտո կամ մոտո մրցարշավեր):

5.2. Հատուցման են ենթակա Կանոնների 5.2-րդ, 5.4-րդ, 5.5-րդ և 5.7-րդ կետերով նախատեսված ծախսերը:

5.3. Հատուցման սահմանաչափը, վճարման կարգը, կողմերի իրավունքները, պարտականությունները, պատահարի մասին հայտնելու կարգը, ժամկետները և այլ պայմանները սահմանվում են Կանոնների 1-ից 14-րդ գլուխների վերաբերելի կարգավորումներով, բացառությամբ Կանոնների 4.6.14-րդ ենթակետի, որը սույն հավելյալ ծածկույթի ձեռքբերման դեպքում կիրառելի չէ:

6. «Ուղեբեռ» հավելյալ ծածկույթի շրջանակներում՝

6.1. Ուղեբեռ է հանդիսանում Ապահովադրի/Շահառուի՝ ուղևորության ընթացքում փոխադրվող անձնական իրերը, ինչպես տրանսպորտային կազմակերպություն հանձնած ուղեբեռը, այնպես էլ ձեռքի ծանրոցը:

6.2. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի/Շահառուի գույքային շահերը՝ կապված իրեն պատկանող ուղեբեռի տնօրինման, տիրապետման և օգտագործման հետ:

6.3. Ապահովագրական պատահար են հանդիսանում՝

6.3.1. «Ուղեբեռի կորուստ» - Ապահովագրական Պայմանագրի գործողության ընթացքում փոխադրողի կողմից Ապահովադրի (Շահառուի) գրանցված ուղեբեռի կորուստը կամ լրիվ ոչնչացումը՝ հանկարծակի և չնախատեսված իրադարձության հետևանքով, որը հաստատված է իրավասու մարմինների կողմից տրամադրված փաստաթղթերով (ոստիկանություն, տրանսպորտային կազմակերպություններ և այլն):

6.3.2. «Ուղեբեռի ուշացում» - Ապահովագրական Պայմանագրի գործողության ընթացքում փոխադրողի կողմից Ապահովադրի (Շահառուի) գրանցված ուղեբեռի նախապես համաձայնեցված ժամանակից ավելի քան 5 ժամ ուշացումը, որը հաստատված է իրավասու մարմինների կողմից տրամադրված փաստաթղթերով (ոստիկանություն, տրանսպորտային կազմակերպություններ և այլն):

6.4. Ապահովագրական պատահար չեն հանդիսանում, հետևաբար հատուցման ենթակա չեն՝

6.4.1. Ապահովագրված անձի և/կամ շահագրգիռ երրորդ անձանց դիտավորյալ և/կամ կանխամտածված գործողությունների հետևանքով ուղեբեռի կորուստը կամ ուշացումը.

6.4.2. Ապահովագրված անձի և/կամ շահագրգիռ երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով ուղեբեռի կորուստը կամ ուշացումը.

6.4.3. Պատերազմական գործողությունների, ժողովրդական հուզումների, գործադուլների, ըմբոստացումների, խռովությունների, մասսայական անկարգությունների, ահաբեկչական ակտերի և դրանց հետևանքների հետևանքով ուղեբեռի կորուստը կամ ուշացումը.

6.4.4. Ուղեբեռի մաշվածության, ժանգոտման, բորբոսի, գունազրկման և որակական այլ հատկությունների փոփոխությունները.

6.4.5. Միջատների, կրծող կենդանիների կողմից ուղեբեռի վնասումը.

6.4.6. Քերծվածքի, ներկի թեփոտման և ուղեբեռի արտաքին տեսքի այլ խախտումների հետ, որոնք չեն խոչընդոտում դրա գործառույթներին.

6.4.7. Ապահովադրի կողմից ուղեբեռի փրկմանն ուղղված միջոցառումների ժամանակին չձեռնարկման հետ.

6.4.8. Առանձին կամ փոստով ուղարկված ուղեբեռի կորուստը կամ ուշացումը.

6.4.9. Պետական մարմինների կարգադրությամբ ապահովագրված ուղեբեռի կամ իրերի բռնագրավումը, ռեկվիզացիան, կալանքը կամ ոչնչացումը:

6.5. Ապահովագրական գումարը Ապահովագրված ուղեբեռի յուրաքանչյուր կտորի համար սահմանվում է 500 (հինգ հարյուր) ԱՄՆ դոլարին հ ամարժեք ՀՀ դրամ, իսկ ընդհանուր ուղեբեռի համար՝ 1500 (հազար հինգ հարյուր) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով/վկայագրով:

6.6. «Ուղեբեռի ուշացում» ապահովագրական պատահարի դեպքում ուղեբեռի յուրաքանչյուր կտորի համար հատուցումը հաշվարկվում է 20 (քսան) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ ուշացման յուրաքանչյուր ժամի համար, սկսած 5-րդ ժամից, բայց ոչ ավել քան 12 ժամը:

6.7. Հատուցման վճարման կարգը, կողմերի իրավունքները, պարտականությունները, պատահարի մասին հայտնելու կարգը, ժամկետները և այլ պայմանները սահմանվում են Կանոնների 1-ից 14-րդ գլուխների վերաբերելի կարգավորումներով:

7. «Ուղևորության չեղարկում կամ հետաձգում» հավելյալ ծածկույթի շրջանակներում՝

7.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի/Շահառուի գույքային շահերը՝ կապված ուղևորության չեղարկման կամ հետաձգման (ուղևորության մեկնման ամսաթվի փոփոխություն ավելի ուշ ամսաթվով) հետևանքով առաջացած ծախսերի/վնասների հետ:

7.2. Ապահովագրական պատահար են հանդիսանում ստորև թվարկված իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, բայց ոչ շուտ, քան Պայմանագրի կնքման ամսաթվից 3 օր հետո.

7.2.1. «Մահ կամ հոսպիտալացում» - Ապահովագրված անձի և/կամ իր ընտանիքի անդամներից որևէ մեկի (կին/ամուսին, երեխաներ, ծնողներ, քույր, եղբայր) ուղևորության գործողության ամսաթվի սկզբի պահին առողջության վատթարացման կամ դժբախտ պատահարի հետևանքով հրատապ հոսպիտալացումը կամ մահը:

7.2.2. «Անշարժ գույքի վնաս (ոչնչացման)» - Ապահովագրված անձին պատկանող անշարժ գույքի վնաս կամ ոչնչացում հրդեհի (հրդեհ ասելով հասկացվում է կրակի առաջացում, որը կարող է ինքնուրույն տարածվել իր համար հատուկ նախատեսված առաջացման և պահպանման վայրից դուրս), ջրի խողովակաշարի, կոյուղու և/կամ ջեռուցման համակարգերի ջրից վնասվածքի, երրորդ անձանց կողմից հասցված վնասի, պայմանով, որ վնասի առաջացման պատճառների բացահայտման և հետևանքների վերացման գործընթացներն իրականացվում են Պայմանագրի գործողության ընթացքում:

7.2.3. «Զինվորական զորակոչ» - Ապահովագրված անձին ժամկետային, պահեստազորային և զորահավաքային զինվորական ծառայության զորակոչելը, պայմանով, որ զորակոչի փաստաթղթային կամ էլեկտրոնային ծանուցագիրն Ապահովագրված անձը ստացել է ապահովագրական պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո.

7.2.4. «Դատական գործ» - դատական նիստերի կամ քննչական գործողությունների Ապահովագրված անձի մասնակցելը, պայմանով, որ դատարանի կամ իրավապահ մարմնի կողմից ուղարկված ծանուցում ստացվել է ապահովագրական պայմանագիրը կնքելուց հետո, իսկ դատական նիստերի կամ քննչական գործողությունների անցկացման ամսաթիվը նշանակված է նախատեսվող ուղևորության ժամանակահատվածում.

7.2.5. «Համաճարակ» - Ապահովագրված անձի կամ վերջինիս ուղևորության ուղեկցի մոտ համաճարակային հիվանդության ախտորոշումը, պայմանով, որ համաճարակային հիվանդությունն ախտորոշվել է ուղևորությունից առավելագույնը 72 ժամ առաջ:

7.3. Հատուցման են ենթակա մինչև ապահովագրական պատահարը ապահովագրված անձի կողմից ուղևորության տոմսի և հյուրանոցային ծառայությունների ձեռքբերման նպատակով փաստացի իրականացված ծախսերի մասով կրած ֆինանսական վնասները:

7.4. Հատուցման սահմանաչափը, վճարման կարգը, կողմերի իրավունքները, պարտականությունները, պատահարի մասին հայտնելու կարգը, ժամկետները և այլ պայմանները սահմանվում են Կանոնների 1-ից 14-րդ գլուխների վերաբերելի կարգավորումներով:

8. «Մուտքի արտոնագրի (վիզայի) մերժում» հավելյալ ծածկույթի շրջանակներում՝

8.1. Ապահովագրական պատահար է հանդիսանում իրավասու մարմնի (դեսպանատուն, հյուպատոսություն և այլն) կողմից Ապահովագրված անձին մուտքի արտոնագրի (վիզայի) տրամադրման մերժման հետևանքով ծրագրավորված ուղևորության չեղարկումը:

8.2. Ապահովագրական պատահար չեն հանդիսանում, հետևաբար հատուցման ենթակա չեն՝

8.2.1. արտոնագրի (վիզայի) տրամադրման մերժումն այն հիմքով, որ մուտքի արտոնագրի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը չեն ներկայացվել իրավասու մարմնի (դեսպանատուն, հյուպատոսություն և այլն) կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

8.2.2. ապահովագրված անձի կողմից՝ նախկինում այցելություն կատարած երկրի/երկրների օրենսդրության (ադմինիստրատիվ, քաղաքացիական և այլն) խախտում, ինչն իր հերթին հանգեցրել է մուտքի արտոնագրի տրամադրման մերժմանը.

8.3. Ապահովագրական գումարը կազմում է 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

8.4. Հատուցման են ենթակա մինչև ապահովագրական պատահարը ապահովագրված անձի կողմից ուղևորության տոմսի և հյուրանոցային ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև մուտքի արտոնագիր ստացման համար փաստացի իրականացված ծախսերի մասով կրած ֆինանսական վնասները:

8.5. Հատուցման վճարման կարգը, կողմերի իրավունքները, պարտականությունները, պատահարի մասին հայտնելու կարգը, ժամկետները և այլ պայմանները սահմանվում են Կանոնների 1-ից 14-րդ գլուխների վերաբերելի կարգավորումներով:

9. «Ժամկետների խափանում» հավելյալ ծածկույթի շրջանակներում՝

9.1. Ապահովագրական պատահար են հանդիսանում՝

9.1.1. «Վերադարձի հետաձգում» - Ապահովագրված անձի անձը հաստատող փաստաթղթի կորստի, ինչպես նաև փոխադրողի կողմից վերադարձի չվերթի հետաձգման հետևանքով Ապահովագրված անձի ուղևորության վերադարձի նախատեսված ժամկետի երկարաձգումը:

9.1.2. «Վաղաժամ վերադարձ» - Ապահովագրված անձի ընտանիքի անդամներից (կին/ամուսին, երեխաներ, ծնողներ, քույր, եղբայր) որևէ մեկի մահվան կամ հոսպիտալացման, անշարժ գույքի վնասման (ոչնչացման) հետևանքով Ապահովագրված անձի ուղևորության վերադարձի նախատեսված ժամկետից շուտ վերադարձը:

9.2. Ապահովագրական գումարը կազմում է 1000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

9.3. «Վերադարձի հետաձգում» Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձի ուղևորության վերադարձի նախատեսված ժամկետը 6-ից 12 ժամ հետաձգվելու դեպքում հատուցման է ենթակա օդանավակայանի «Բիզնես սրահի» մեկանգամյա մուտքի գումարը, իսկ 12 ժամից ավել հետաձգման դեպքում՝ հյուրանոցային ծախսերը, սակայն ոչ ավել, քան յուրաքանչյուր հետաձգված օրվա համար 150 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

9.4. «Վաղաժամ վերադարձ» Ապահովագրական պատահարի հետևանքով նոր տոմս ձեռք բերելու կամ տոմսի վերադարձի ժամկետի փոփոխման համար կատարված ծախսերը:

9.5. Հատուցման վճարման կարգը, կողմերի իրավունքները, պարտականությունները, պատահարի մասին հայտնելու կարգը, ժամկետները և այլ պայմանները սահմանվում են Կանոնների 1-ից 14-րդ գլուխների վերաբերելի կարգավորումներով:

10. «Գույքի ապահովագրություն ճամփորդության ընթացքում» հավելյալ ծածկույթի շրջանակներում՝

10.1. Ուղևորության ողջ ժամանակահատվածի համար ապահովագրման է ենթակա Ապահովագրված անձի բնակարանը (առանձնատունը), որտեղ Ապահովագրված անձը մինչև ուղևորությունը փաստացի բնակվում է:

10.2. Ապահովագրական գումարը սահմանվում է 5000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով/Պայմանագրով:

10.3. Ապահովագրական պատահարները, օբյեկտները, ռիսկերը, առարկան, հատուցման կարգը և այլ պայմանները կարգավորվում են «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի խորհրդի 25.06.2019թ.-ի թիվ 177 արձանագրությամբ հաստատված «ՀՐԴԵՀԻՑ ԵՎ ԱՅԼ ՎՏԱՆԳՆԵՐԻՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» համապարփակ կանոններով:

11. «Կրուիզի չեղարկում» հավելյալ ծածկույթի շրջանակներում՝

11.1. Ապահովագրական պատահար է համարվում կրուիզի (նավարկության) չեղարկումը, որը պետք է տեղի ունենար Ապահովագրված անձի ուղևորության ընթացքում:

11.2. Ապահովագրական գումարը սահմանվում է 3000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով/Պայմանագրով:

11.3. Եթե կրուիզը չեղարկվել է մինչև Ապահովագրված անձի ուղևորության մեկնարկը, ինչի հետևանքով Ապահովագրված անձը հրաժարվում է ճանապարհորդության մեկնելուց, ապա հատուցման են ենթակա մինչև ապահովագրական պատահարը ապահովագրված անձի կողմից ուղևորության տոմսի և հյուրանոցային ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև մուտքի արտոնագրի ստացման համար փաստացի իրականացված ծախսերի մասով կրած ֆինանսական վնասները:

11.4. Եթե կրուիզը չեղարկվել է Ապահովագրված անձի ճանապարհորդության ընթացքում և Ապահովագրված անձը որոշում է վաղաժամ վերադառնալ, ապա հատուցման են ենթակա նոր տոմս ձեռք բերելու կամ տոմսի վերադարձի ժամկետի փոփոխման համար կատարված ծախսերը:

11.5. Եթե կրուիզը չեղարկվել է Ապահովագրված անձի ճանապարհորդության ընթացքում և Ապահովագրված անձը որոշում է վաղաժամ չվերադառնալ, ապա յուրաքանչյուր օրվա համար հատուցման է ենթակա 150 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Սույն ենթակետով հատուցման ժամանակահատվածը չի կարող ավել լինել կրուիզի ժամանակահատվածից:

11.6. Հատուցման վճարման կարգը, կողմերի իրավունքները, պարտականությունները և այլ պայմանները սահմանվում են Կանոնների 1-ից 14-րդ գլուխներում սահմանված վերաբերելի կարգավորումներով:

12. «Տնային կենդանիների ապահովագրություն ճամփորդության ընթացքում» հավելյալ ծածկույթի շրջանակներում՝

12.1. Ապահովագրական պատահար է համարվում արտաքին, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ), չմտադրված, անկանխատեսելի պայմանների և հանգամանքների զուգադիպումը, որի դեպքում Ապահովագրված անձի կամքից անկախ մարմնական վնասվածքների հետևանքով վնաս է հասցվում ապահովագրված տնային կենդանու առողջությանը:

12.2. Ապահովագրական օբյեկտները, ռիսկերը, առարկան, հատուցման կարգը և այլ պայմանները կարգավորվում են «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի խորհրդի 17.03.2021թ.-ի թիվ 204 արձանագրությամբ հաստատված «ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» կանոններով:

12.3. Ապահովագրական գումարը սահմանվում է 1000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով/Պայմանագրով: